



USAID
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

COUNTERPART
 INTERNATIONAL
 In partnership for
 results that last.



URBAN
 FOUNDATION
 for sustainable development

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՐ
 ՈԼՈՐՏԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ
 ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

RFP-AR-2023-001

ԵԶՐԱՓՈՒԿ ԶԵԿՈՒՅՑ

2023

«ՄԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ
 E-mail: info.am@civitta.com
 Հեռ. +374-10-546434

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ձեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 5
- ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6
- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8
- 1. ԶՅԿ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱԿՆԱՐԿ10
- 2. ԶՅԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԱԶԱՓԵՐԸ10
- 3. ԶՅԿ-ՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ.....11
- 3.1. ԶՅԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ11
 - 3.1.1. ԿՐԱՍՏԱՆ11
 - 3.1.2. ՈՒԿՐԱԻՆԱ13
 - 3.1.3. ԼԵՅԱՍՏԱՆ.....14
 - 3.1.4. ԷՍՏՈՆԻԱ16
- 3.2 ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ԶՅԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ17
 - 3.2.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ (ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ | ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ.....17
 - 3.2.2 ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԶՅԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ18
 - 3.2.3 ՀԱՄԱՏԵՂ ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ19
 - 3.2.4 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԻՄՆԱԴԻՐԱՄՆԵՐ19
 - 3.2.5 ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԱ ՀԻՄՆԱԿԾ ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ20
 - 3.2.6. «1% ԽՈՍՏՈՒՄ» ՄՈՂԵԼ20
- 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՅԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԸ.....22
- 4.1. ԶՅԿ-ՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՈՐ ՈԼՈՐՏԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.....25
- 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ27
- 5.1. ԶՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՐ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ27
- 5.2. ԶՅԿ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ Կայունությունն ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ 27
- 5.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈՖԻԼ29
- 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ30
- 6.1. ԲԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....30
- 6.2. ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ31
- 7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ32
- 7.1. ՏԵՂԵԿԱՅԿԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԶՅԿ-ՆԵՐԻ ՆԿԱՏԱՍՐ.....32
- 7.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՅԿ-ՆԵՐԻ ՀԵՏ33
- 7.3. ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ39

7.4. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ.....42

7.5. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....44

8. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ49

9. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ.....52

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ54

10.1. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻՆ.....54

10.2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ55

10.3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ.....56

11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....58

11.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1.....58

 11.1.1. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԾԱՐ58

 11.1.2. ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....63

11.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ67

 11.2.1. ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....67

 11.2.2. ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՔՀԿ.....69

 11.2.3. ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....71

11.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....73

11.4. ՀԱՎԵԼՎԱԾ 4: ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....74

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	ավելացված արժեքի հարկ
ԱՄՆ ՄՁԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱՏՁՄ	Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
ԳԶՀ	Գործուն քաղաքացիական հասարակություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՍՊ	կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՀԿ ԿԻ	քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքս
NENO	Էստոնական ոչ առևտրային կազմակերպությունների ցանց
BONGO	բիզնեսի կողմից ստեղծված հասարակական կազմակերպություն
COAF	Հայաստանի մանուկների հիմնադրամ
CSDW	Մանկական անվտանգ խմելու ջուր
GRW	Գլոբալ վերականգնվող էներգիայի աղբյուրների դիտարկում

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Քաունթերփարթ Ինթերնեշնլ»-ը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՉԳ) ֆինանսավորմամբ իրականացնում է «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագիրը (ԳԶՀ): Ծրագրի շրջանակներում «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ն իրականացրել է ուսումնասիրություն, որի նպատակն է գնահատել մասնավոր աղբյուրներից Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ֆինանսավորման մարտահրավերներն ու հնարավորությունները: Այն հիմնված է միջազգային փորձի ուսումնասիրության, քանակական և որակական հետազոտությունների վրա:

Հայաստանին զուգահեռ ուսումնասիրվել են մի քանի երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Էստոնիայի ՔՀԿ-ների գործունեության միջավայրերն ու ֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև՝ այդ կազմակերպությունների ֆինանսավորման միջազգային լավագույն փորձը: Գրասենյակային ուսումնասիրության արդյունքները համալրվել են քանակական և որակական հետազոտության արդյունքներով: Իրականացվել է քանակական հարցում 151 մասնավոր ընկերությունների շրջանում, ինչպես նաև՝ 10 խորին հարցազրույց՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ, և 3 խմբային բննարկում՝ երկուսը՝ ՔՀԿ-ների մասնակցությամբ, մեկը՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների:

Մասնավոր ընկերությունները և ՔՀԿ-ները համագործակցում են և՛ ավանդական, և՛ նորարարական մեխանիզմներով: Ավանդական մեխանիզմներն ավելի շատ կիրառվում են, երբ ֆինանսավորողը միջազգային դոնոր կազմակերպություն է կամ պետական կառույց, իսկ միջազգային փորձում մասնավոր հատված և ՔՀԿ համագործակցությունը զարգանում է հիմնականում նորարարական մեխանիզմների կիրառությամբ: Այդ մեխանիզմներից են՝ զարգացման (ազդեցության) պարտատոմսերը, հետազոտության և զարգացման շուրջ գործընկերությունը, համատեղ արժեք ստեղծելու գործընկերությունը, կորպորատիվ հիմնադրամները, հմտությունների վրա հիմնված կամավորությունն ու «1% նվիրաբերելու» մոդելը:

Հայաստանի ՔՀԿ-ների միջավայրում առկա են թե՛ երկրին բնորոշ մարտահրավերներ, և թե՛ համընդհանուր խնդիրներ, որոնք հանդիպում են նաև այլ երկրներում: Հայաստանում քաղաքացիական հասարակությունը մեծապես ապավինում է դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը և բախվում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման խնդրին: Անհատների նվիրատվությունները, մասնավոր ընկերությունների աջակցությունները և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները ՔՀԿ-ների ֆինանսավորման միայն փոքր մասն են կազմում:

Մասնավոր ընկերությունները հիմնականում համագործակցում են ՔՀԿ-ների հետ և ֆինանսավորում տրամադրում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) կամ ԿՍՊ-ին առնչվող ծրագրերի շրջանակներում: Վերջինս առավել լայնամասշտաբ իրականացվում է խոշոր ընկերություններում:

Հայաստանում մասնավոր ընկերությունների վերաբերմունքը ՔՀԿ-ների նկատմամբ չեզոք է: Չնայած մասնավոր ընկերությունների և ՔՀԿ-ների միջև համագործակցության դրական նախադրյալներին՝ հաճախ նրանց ռազմավարական նպատակների անհամապատասխանությունը վերաժվում է խոչընդոտի, և մասնավոր ընկերությունները ցանկանում են ԿՍՊ ծրագրերն ինքնուրույն իրագործել:

ՔՀԿ-ներին ֆինանսավորելիս մասնավոր ընկերություններն առաջնային են համարում դրանց նկատմամբ գոյություն ունեցող վստահությունը, ինչպես նաև՝ աշխատանքի

թափանցիկությունը: Սովորաբար ֆինանսավորման գործընթացը մեկնարկում է դիմորդ ՔՀԿ գործունեության խորքային ուսումնասիրությամբ և առաջարկվող ծրագրի գնահատմամբ՝ պարզելու, թե աջակցություն ստացած ՔՀԿ-ն ինչպես կօգտագործի ֆինանսները և արդյոք պատասխանատու և հետևողական կլինի ծրագրի իրականացման ընթացքում:

Արդեն ձևավորված գործընկերային հարաբերություններում մասնավոր ընկերությունների և ՔՀԿ-ների միջև թեև էական խոչընդոտներ չեն ծագում, և փորձառությունը, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվում, մասնավոր ընկերությունները, սակայն, նախընտրում են համագործակցել երկրում ակտիվ գործունեություն ծավալող հիմնադրամների, ոչ թե ՔՀԿ-ների հետ:

Չարգացող ուղղություն է ԿՍՊ-ն, որի մասին երբեմն թյուրըմբռնում կա. այն հաճախ նույնացվում է բարեգործական նվիրատվության կամ ֆինանսական աջակցության հետ: Մասնավոր ընկերությունների համար թիրախային ոլորտներ են կրթությունը, զբաղվածության խթանումը և համայնքային զարգացումը: ԿՍՊ ծրագրերի հիմնական շահառուներն են երեխաները, երիտասարդները և հաշմանդամություն ունեցող անձինք:

Մասնավոր ընկերությունների և ՔՀԿ-ների համագործակցության ամրապնդման համար անհրաժեշտ է շահագրգիռ կողմերի համար մշակված ընդհանուր օրակարգ և կազմակերպական նպատակների իրագործման փոխհամաձայնություն ու փոխգործակցություն:

ՆԵՐՎԵՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են շուրջ 6079 հասարակական կազմակերպություն (ՀԿ) և 1601 հիմնադրամ¹:

Հայաստանի ՔՀԿ-ները հիմնականում ֆինանսավորվում են դոնոր կազմակերպություններից և բախվում ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման խնդրին: Անհատների նվիրատվությունները, կորպորատիվ աջակցությունը և ծառայությունների մատուցումը ֆինանսավորման աղբյուրների չնչին մասնաբաժինն են կազմում, իսկ մասնավոր կազմակերպությունները հաճախ նախընտրում են ինքնուրույն իրականացնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախաձեռնությունները՝ նվազագույնի հասցնելով ՔՀԿ-ների հետ միջնորդավորված համագործակցությունը:

Հայաստանում բարեգործական ներուժի պատշաճ բացահայտման համար մշակութային և ինստիտուցիոնալ գործոններ են անհրաժեշտ: Ներկայումս անհատների և բիզնեսների շրջանում բարեգործության մշակույթը սաղմնային փուլում է: Համաշխարհային նվիրատվության ցուցանիշով (World Giving Index 2022²)՝ Հայաստանը գտնվում է աշխարհի ամենացածր միավոր ունեցող 10 երկրների ցանկում: Կորպորատիվ նվիրատվության ոլորտում համապարփակ ռազմավարությունն ու ծրագրերը քիչ են, դրանք էլ հիմնականում իրականացվում են խոշոր ընկերությունների կողմից, որոնք նախանշված առաջնահերթություններ ունեն:

ԱՆ ՄԶԳ ԳԶՀ ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում քաղաքացիական հասարակության ֆինանսական կայունությանն ու կազմակերպական կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման գործընթացում:

ԳԶՀ ծրագրի շրջանակներում «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ն ուսումնասիրություն է իրականացրել՝ գնահատելու Հայաստանում մասնավոր հատվածի կողմից ՔՀԿ-ներին ֆինանսավորելու հնարավորությունները: Հետազոտության հիմնական ուղղություններն են՝ ՔՀԿ-ների հանդեպ վստահությունը, համագործակցության փորձառությունն ու հեռանկարները, ֆինանսավորման գործընթացները, առկա խոչընդոտները և ՔՀԿ-ների ներուժի բացահայտումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ | Հետազոտության նպատակն է գնահատել մասնավոր աղբյուրներից ՔՀԿ-ների ֆինանսավորման միջավայրը Հայաստանում՝ դիտարկելով նաև այդ ֆինանսավորման և՛ մարտահրավերները, և՛ հնարավորությունների բացահայտումը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ |

- Որո՞նք են ՔՀԿ-ներին ֆինանսավորելու՝ մասնավոր ընկերությունների ներկայիս ընկալումները, մարտահրավերները և խթանները:
- Ինչպե՞ս են մասնավոր հատվածի ընկերություններն ընկալում իրենց դերը ՔՀԿ-ներին աջակցելու գործում:
 - Որո՞նք են այն հիմնական մարտահրավերները, որոնց բախվում են մասնավոր հատվածի ընկերությունները ՔՀԿ-ների հետ առնչվելիս:

¹ 31.12.2022թ. դրությամբ գրանցված (հաշվառված) կազմակերպությունների թիվը, [հղում](#)

² World Giving Index 2022, [հղում](#)

- Ի՞նչ խթաններ (օրինակ՝ հարկային արտոնություններ կամ ԿՍՊ նպատակներ) կան, որոնք կշահագրգռեն մասնավոր ընկերություններին՝ աջակցելու ՔՀԿ-ներին:
- Ինչպիսի՞ ՔՀԿ-ների և նախագծերի են պատրաստ աջակցել մասնավոր ընկերությունները:
 - Արդյո՞ք մասնավոր ընկերություններն ավելի հակված են աջակցելու գործունեության հատուկ ուղղվածություն ունեցող ՔՀԿ-ներին:
 - Ի՞նչ բնույթի ծրագրերը կամ նախաձեռնությունները կարող են մասնավոր ընկերությունների համար առավել գրավիչ և ազդեցիկ լինել, որպեսզի աջակցեն ՔՀԿ-ներին:
- Ի՞նչ գործոններ են ազդում մասնավոր հատվածի կազմակերպությունների վրա՝ ՔՀԿ-ներին ֆինանսավորելու որոշում կայացնելու համար:
- Ինչպե՞ս կարող է մասնավոր հատվածը հասցեագրել ՔՀԿ-ներին նվիրատվություններ կատարելու մարտահրավերները:
 - Խոչընդոտները հաղթահարելու համար ի՞նչ ռազմավարություն է հնարավոր կիրառել. խոսքը բյուրոկրատական գործընթացների կամ թափանցիկության հետ կապված մտահոգությունների մասին է, որոնք մասնավոր հատվածի ընկերություններին հետ են պահում ՔՀԿ-ներին նվիրատվություններ անելուց:
 - Ինչպե՞ս կարելի է խթանել մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը՝ ավելի արդյունավետ և կայուն փորձ ձեռք բերելու համար:
- Ինչպիսի՞ հաջողված մոդելներ և լավագույն փորձ կա մասնավոր հատվածի կողմից ՔՀԿ-ներին աջակցելու ոլորտում:
 - Ո՞ր երկրներն են մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների միջև համագործակցության հաջող մոդելներ գրանցել, ի՞նչ դասեր կարելի է քաղել այդ մոդելներից:
 - Կա՞ն արդյոք նորարարական մոտեցումներ, որոնք արդյունավետ են եղել ՔՀԿ-ներին աջակցելու հարցում:

1. ՔՅԿ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱԿՆԱՐԿ

Քաղաքացիական հասարակությունը, որը հաճախ անվանում են «երրորդ հատված», տարբերվում է և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներից: Այն սահմանվում է որպես ընդհանուր նպատակներին հասնելու համար ջանքերի համախմբում, որը հանգեցնում է այդ ուղղությամբ կազմակերպված գործողությունների: ՔՅԿ-ներն ընդգրկում են առևտրային և պետական կազմակերպություններից դուրս գտնվող այն բոլոր խմբերը, որտեղ անհատները միավորում են իրենց ուժերը՝ առաջ մղելու հանրային ոլորտի ընդհանուր շահերը:

Այս սահմանումը վերաբերում է անդամակցության վրա հիմնված ՔՅԿ-ներին, սոցիալական շարժումներին, բարոզչական խմբերին, ասոցիացիաներին, արհմիություններին, կոոպերատիվներին, մասնագիտական ընկերություններին, առևտրի պալատներին, անկախ հետազոտական ինստիտուտներին և շահույթ չհետապնդող լրատվամիջոցներին (OECD, 2003):

ՔՅԿ այս սահմանումը լայնորեն ընդունված է և կիրառվում է նույնիսկ հեղինակավոր գործընկերների՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Եվրոպական հանձնաժողովի կողմից:

2. ՔՅԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԱԶԱՓԵՐԸ

Տարբերակվում է մասնավոր հատվածի կողմից ՔՅԿ-ների ֆինանսավորման երեք հիմնական աղբյուր՝ կորպորատիվ նվիրատվություն, դրամաշնորհներ դոնոր կազմակերպությունների կողմից և նվիրատվություններ անհատների կողմից: Կորպորատիվ ֆինանսավորման շրջանակներում կարելի է նաև առանձնացնել ինստիտուցիոնալացված և ոչ ինստիտուցիոնալ ֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև՝ միանգամյա և ռազմավարական բարեգործությունը:

Ինստիտուցիոնալ ֆինանսավորումը կարող է տրամադրվել տեղական կամ միջազգային մակարդակով: Այն դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների՝



ենթադրամաշնորհ, պահուստային ֆոնդեր և նվիրատվության ֆոնդեր: Նվիրատվությունները, ըստ տրամադրման հաճախականության, ևս կարելի է դասակարգել միանվագ նվիրատվությունների և կանոնավոր (ծրագրված) նվիրատվությունների, իսկ ըստ տրված նվիրատվության չափի՝ փոքր և նշանակալի:

ՔՅԿ-ների՝ մասնավոր միջոցներ հայթայթելու հնարավորություններով

պետք է հետաքրքրված լինի նաև կառավարությունը, քանի որ այս երևույթը սոցիալական նորարարությունն է: Սոցիալական նորարարության ոչ ինստիտուցիոնալ ֆինանսավորման անհրաժեշտություն կա և՛ կառավարության, և՛ ՔՅԿ-ների տեսանկյունից: Նման

սոցիալական նորարարությունը ռիսկային բարձր մակարդակ ունի (վաղ փուլերում, որը համեմատելի է վենչուրային ներդրումների ռիսկի հետ) և սովորաբար ֆինանսավորվում է մասնավոր աղբյուրներից, որտեղ անհաջող փորձերի հավանականությունն ավելի ընդունելի է³:

Մասնավոր ֆինանսավորումը կարևոր է պետական քաղաքականության իրականացման գործընթացը և դրա ազդեցությունը մշտադիտարկող փորձագիտական խմբերի ֆինանսավորման և շահերի պաշտպանության համար, հատկապես երբ պետական համակարգի ներգրավվածությունը թերի է: Բազմակողմ շահառուների ներգրավվածությունն ապահովում է արդյունավետ քաղաքականություն իրականացնելու գործընթացը:

3. ԹՅՎ-ՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՉԱՏՎԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

3.1. ԹՅՎ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

3.1.1. ՎՐԱՍՍԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | Վրաստանում ԹՅՎ-ները, ի տարբերություն տարածաշրջանի մյուս երկրների, հայտնի են իրենց գործունեության արդյունավետությամբ և ակտիվությամբ:

Քաղաքացիական հասարակությունը Վրաստանում կայացել է առանց կառավարության հավելյալ միջամտության և դարձել է նրա արդյունավետ հակակշիռը՝ հաճախ նպաստելով նաև «քաղաքական ռեժիմի» փոփոխությանը:

ԹՅՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ⁴ | Վրաստանի ԹՅՎ-ների կայունության ինդեքսը 2009-2021 թվականներին հիմնականում եղել է 4.2-ից 4.0 միջակայքում: Այդպիսի ցուցանիշ ունեցող երկիրը դասակարգվում է որպես «զարգացող», և ԹՅՎ միջավայրի զարգացման գործընթացը բարելավման կարիք ունի:

ԱՂՅՈՒՄԱԿ 1: ԹՅՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ՎՐԱՍՍԱԼ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	4.2	4.2	4.2	4.2	4.1	4.1	4.1	4.1	4.1	4.0	4.0	4.0	4.0

³ Տե՛ս International Practices of Funding Civil Society Organizations, OSCE PCU Project, 2010, էջ 25:

⁴ Վերջին 25 տարիների ընթացքում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը (ԹՀԿԻԻ), որը 73 երկրներում գնահատում է ԹՅՎ սեկտորի կայունությունը:

ԱՂՅՈՒՄԱԿ 2: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (2009-2021)

ՎՐԱՍՏԱՆ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	4.2	4.2	4.2	4.2	4.1	5	5	5	5	5	5	5	5
	1-3			3-5				5-7					
	Ընդլայնված (Enhanced)			Չարգացող (Evolving)				Սահմանափակված (Impeded)					

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ | Վրաստանի քաղաքացիական հասարակության կախվածությունը դոնորների ֆինանսավորումից մեծ է: Սակավաթիվ ՔՀԿ-ների է հաջողվում դիվերսիֆիկացնել իրենց ֆինանսավորման աղբյուրները, ուստի շատերը շարունակում են ֆինանսական աջակցություն ստանալ միայն մեկ դոնորից: Թեև 2021 թվականին ՔՀԿ-ները հնարավորություն ունեին օգտվելու ծրագրային բնույթ կրող կարճաժամկետ ֆինանսավորումից, մասնավորապես COVID-19 համավարակով պայմանավորված, հարկ է նշել, որ երկարաժամկետ աջակցության մեխանիզմները սահմանափակ են:

Վրաստանում բարեգործության միջավայրը գտնվում է զարգացման վաղ փուլում: Համաձայն World Giving Index 2022-ի՝ հարցվածների միայն 3%-ն է նշել, որ 2021 թվականին բարեգործական նպատակներով գումար է հատկացրել. ըստ այդ ցուցանիշի՝ երկիրն զբաղեցրել է վերջին հորիզոնականները: Տեղական դրամահավաքի նախաձեռնության հաջողված օրինակ է սոցիալական բարեկեցության ծրագրերի՝ «Օրբելիանի ՀԿ» արագ ընդլայնվող քրաուդֆանդինգային հարթակը:

Ծառայություններ մատուցող ՔՀԿ-ները եկամուտներ են ստանում ինչպես հանրային, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին խորհրդատվություն, ուսուցում, դասապատրաստում և հարակից ծառայություններ մատուցելով: Թեև շատ դոնորներ՝ ներառյալ եվրոպական միությունը, միտում ունեն աջակցելու սոցիալական ստարտափներին և սոցիալական ձեռներեցությանը, Վրաստանում կայուն սոցիալական ձեռնարկությունների օրինակները դեռևս եզակի են:

Խոշոր և կայացած կազմակերպությունները սովորաբար ֆինանսական կառավարման հստակ համակարգեր ունեն, որոնք ներառում են ֆինանսական թափանցիկությունն ապահովող ուղեցույցներ: ՔՀԿ-ները սովորաբար տարեկան աուդիտ են անցնում, սակայն քչերն են հրապարակում ֆինանսական հաշվետվությունները: Միևնույն ժամանակ ՔՀԿ-ների մեծ մասը հրապարակում է իր ֆինանսավորման աղբյուրներն ու ծրագրերը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |

Վրաստանում զարգացող ուղղություն է մասնավոր հատվածի ներգրավվածությունը սոցիալական խնդիրների լուծման և հանրության բարեկեցության բարձրացման գործում: Ժամանակակից հասարակությունը մասնավոր հատվածից ակնկալում է ավելին, քան պարզապես կոմերցիոն գործունեությունն է: Ավելին, մասնավոր ընկերությունները ԿՍՊ-ն մրցակցային առավելություններ ձեռք բերելու արդյունավետ գործիք են համարում և հաճախ են ձգտում իրենց բիզնես ռազմավարության մեջ ներառել ԿՍՊ սկզբունքները:

Վերջին տասնամյակում Վրաստանում ԿՍՊ ոլորտում բիզնեսի ներգրավվածության զգալի աճ է նկատվել: Թեպետ ընկերությունները ԿՍՊ համատեքստում ավելի շատ կարևորում են բարեգործությունն ու հովանավորությունը, կազմակերպությունների մեծ մասը, սակայն, փաստաթղթավորված և կառուցվածքային ԿՍՊ ռազմավարություն չունի, որը հիմք

կհանդիսանա որոշումների կայացման ու համապատասխան նախաձեռնությունների իրականացման համար: ԿՍՊ նախաձեռնությունները հիմնականում կարճաժամկետ են և ոչ համակարգային:

ՀԱՐԿԱՅԻՆ ԽՁՎՆԵՐ | Հարկային օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին վերադարձնել ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), որը վճարվել է դրամաշնորհների հետ կապված ծախսերի համար⁵: Իսկ բիզնեսներն իրավունք ունեն նվազեցնելու հարկվող եկամուտը մինչև 10%-ի⁶ չափով:

3.1.2. ՈՒԿՐԱԻՆԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | Ուկրաինայում կա ավելի քան 20,000 ակտիվ ՔՀԿ, որոնք գործում են տարբեր ոլորտներում և համարվում են երկրի քաղաքացիական հասարակության կենսունակ մաս: ՔՀԿ-ները հիմնականում գտնվում են Կիև, Օդեսա, Լվով, Դնեպրոպետրովսկ և Խարկով քաղաքներում: ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուր շարունակում են մնալ օտարերկրյա ֆինանսական դոնորները: Բացի ավանդական ՔՀԿ-ներից, մեծ թվով գործակալություններ փնտրում են քաղաքացիների համախմբման և ներգրավման նոր ձևաչափեր, ինչպես օրինակ՝ խմբային նախաձեռնությունները, կենտրոնները (հանգույցները) և սոցիալական ձեռնարկությունները:

ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻԴԵՔՍ | Ուկրաինայի՝ 2009-2021 թվականներն ընկած ժամանակահատվածի ՔՀԿ կայունության ինդեքսի ցուցանիշները 3.2-3.5 միջակայքում են: Սա խոսում է երկրում քաղաքացիական հասարակության հատվածի կայունության մասին: Այս ցուցանիշներով Ուկրաինան գնում է դեպի «կանաչ գոտի», այսինքն՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և նախաձեռնություններին աջակցելու ջանքերն այստեղ զգալի առաջընթաց են գրանցում:

ԱՂՅՈՒՄԱԿ 3: ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (ՈՒԿՐԱԻՆԱ)

ՈՒԿՐԱԻՆԱ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	3.5	3.5	3.5	3.4	3.4	3.3	3.3	3.3	3.2	3.3	3.2	3.2	3.2

ԱՂՅՈՒՄԱԿ 4: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (2009-2021)

ՈՒԿՐԱԻՆԱ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	4.2	4.2	4.3	4.3	4.2	4.2	4.2	4.2	4.2	4.1	4	4	4

1-3	3-5	5-7
Ընդլայնված (Enhanced)	Չարգացող (Evolving)	Սահմանափակված (Impeded)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ | Համաձայն 2022 World Giving Index-ի՝ Ուկրաինայում հարցման մասնակիցների 47%-ը նշել է բարեգործության նպատակով գումար նվիրաբերելու մասին: Տեղական ռեսուրսներ ներգրավելու համար ՔՀԿ-ները, որպես

⁵ՔՀԿ ֆինանսական կայունության և կորպորատիվ, անհատական բարեգործության իրավական միջավայրի գնահատում, ԱՄՆ ՄՁԳ, 2022, [հղում](#)

⁶ Վրաստան, Կորպորատիվ Նվազեցումներ, PwC, 2023, [հղում](#)

Ֆինանսավորման գործիք, առավել հաճախ դիմում են քրաուդֆանդինգին: Կիրառվում են ֆինանսավորման տարբեր հարթակներ՝ KIND Challenge, Big Idea, SuperTeam of Tabletochki Foundation, Patreon և Benevity: Կարևոր է նշել, որ քրաուդֆանդինգի գործիքի կիրառությունն արդյունավետ է «Էմոցիոնալ» բաղադրիչ պարունակող կարճաժամկետ նախաձեռնությունների համար միջոցներ հայթայթելիս (օրինակ՝ երիտասարդական ծրագրեր, սոցիալական նախագծեր, աջակցություն վետերաններին, օգնություն տեղահանվածներին և այլն):

ՔՀԿ-ները երբեմն ֆինանսական աջակցություն են ստանում այնպիսի մասնավոր ընկերություններից, որոնք հիմնականում ֆինանսավորում են բարեգործական ծրագրեր: Արհմիություններում և բիզնես ասոցիացիաներում անդամավճարները ևս ֆինանսավորման աղբյուր են, բայց դրանք, սովորաբար, չնչին մասնաբաժին են կազմում:

ՔՀԿ ԵՎ ՁԵՆՆԱՐԿՎԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ | Որոշ ՔՀԿ-ներ ընդլայնել են իրենց եկամուտների հոսքերն ի հաշիվ վճարովի ծառայությունների, որոնք իրենք մատուցում են միջազգային կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ ՔՀԿ-ների և բիզնեսների: Օրինակ՝ VoxUkraine ՀԿ-ն, համագործակցելով Facebook-ի հետ, սոցիալական մեդիայի հարթակներում զբաղվում է կեղծ բովանդակության բացահայտումներով: Ըստ Եվրոպական ուսուցման հիմնադրամի՝ ՔՀԿ-ների զգալի մասի (58.5%) ֆինանսավորման հիմնական աղբյուրը համարվում է ապրանքների և ծառայությունների վաճառքից գոյացած եկամուտը:

ՔՀԿ-ները եկամուտ ստեղծելու հնարավորություն ունեն նաև ձեռնարկատիրական գործունեության միջոցով: Ծառայությունների որոշ տեսակներ երբեմն գերազանցում են նշված սահմանաչափը, ինչով պայմանավորված՝ որոշ ՔՀԿ-ներ կազմակերպությանը կից ստեղծում են առանձին իրավաբանական անձ, ինչպես օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որպեսզի ապահովեն կանոնադրական համապատասխանությունը՝ նման գործունեություն իրականացնելու համար:

ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹՎՆՆԵՐ | Համաձայն Ուկրաինայի հարկային օրենսգրքի՝ կազմակերպությունները, որոնց մատուցած ծառայությունների ընդհանուր արժեքը գերազանցում է տարեկան 1 միլիոն գրիվնան (մոտ 25,000 եվրո), պարտավոր են գրանցվել որպես ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարողներ: Ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրած ապրանքների կամ մատակարարած ծառայությունների դիմաց վճարումների միայն 70%-ն է ենթակա հարկային նվազեցման: Ոչ առևտրային կազմակերպություններին անվճար մատակարարված ապրանքների կամ ծառայությունների ծախսերի հարկային նվազեցումը սահմանափակվում է նախորդ տարվա հարկվող շահույթի 4%-ով, իսկ սպորտի, ֆիզիկական կուլտուրայի և կրթության ոլորտում գործող ոչ առևտրային կազմակերպություններին աջակցելու համար՝ նախորդ տարվա հարկվող շահույթի 8%-ով⁷:

3.1.3. ԼԵՅԱՍՏԱԼ

ԼԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | Չնայած Լեհաստանում ՔՀԿ-ների զգալի թվին՝ դրանց մեծ մասն ակտիվ չի գործում: 2021 թվականի դրությամբ՝ գրանցվել է 138,000 ՔՀԿ: Այս կազմակերպությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ 107,000 ասոցիացիա և 31,000 հիմնադրամ: Վիճակագրության համաձայն՝ գրանցված կազմակերպություններից ակտիվ

⁷ Կորպորատիվ նվազեցումներ, PwC, 2023, [հղում](#)

Է մոտ 50%-ը, անդամավճարներ հավաքում է ՔՀԿ-ների միայն կեսը, որը նրանց բյուջեի չնչին մասն է կազմում:

ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ |

ԱՂՅՈՒՄԱԿ 5: ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (ԼԵՅԱՍԱՆ)

ԼԵՅԱՍԱՆ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.1	2.2	2.3	2.6	2.7	2.9	2.9

ԱՂՅՈՒՄԱԿ 6: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (2009-2021)

ԼԵՅԱՍԱՆ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	2.7	2.7	2.7	2.8	2.9	2.9	2.9	2.9	3	3.1	3.1	3.3	3.3

1-3	3-5	5-7
Ընդլայնված (Enhanced)	Չարգացող (Evolving)	Սահմանափակված (Impeded)

ՔՀԿ-ների կայունությունը, ընդհանուր առմամբ, Լեհաստանում մնում է անփոփոխ: Համաձայն 2009-ից 2021 թվականների դիտարկումների՝ Լեհաստանի ՔՀԿ-ների կայունության ինդեքսը մշտապես գտնվում է 2.2-2.9 բարենպաստ միջակայքում, որը համարվում է «կանաչ գոտի»:

ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ | 2021 թվականին կորպորատիվ բարեգործության միջոցով ՔՀԿ-ներին տրամադրված ֆինանսական աջակցությունը նվազել է: Ֆինանսավորման այս անկումը նկատելի է եղել հատկապես ֆինանսական ոլորտում գործող ընկերությունների և հիմնադրամների շրջանում: Տեղական մակարդակում կորպորատիվ հովանավորությունը գործնականում վերացել է, իսկ առկա չնչին սահմանաչափով աջակցում են հատուկեւտ բարեգործական նախաձեռնությունների:

Անհատները գումար են նվիրաբերում հեռանկարային և հատկապես այն ոլորտների զարգացման համար, որտեղ կառավարությունը թերանում է: 2021 թվականին լեհ-բելառուսական սահմանի երկայնքով ակտիվ հասարակական հավաքներ են իրականացվել Սահմանային խմբի (Grupa Granica) և այլ մարդասիրական նախաձեռնությունների համար: Այնուամենայնիվ, այն փոքր միջոցները, որոնք ՔՀԿ-ները որպես նվիրաբերություն ստանում են անհատներից, սովորաբար բավարար են միայն կարճաժամկետում: Առցանց հավաքված ֆինանսական միջոցները հիմնականում երկարաժամկետ չեն և ՔՀԿ-ների ֆինանսական աջակցության կայուն աղբյուր չեն համարվում:

Տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների մասնաբաժինը վերջին տարիներին աճել է՝ 2018 թվականի 11%-ից 2021 թվականին հասնելով 15%-ի: Սոցիալական ձեռնարկությունները դեռևս գտնվում են զարգացման սկզբնական փուլում: Դրանք հիմնականում ստեղծվում են Սոցիալական տնտեսության աջակցության կենտրոնների և ԵՄ կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների աջակցությամբ, իսկ ծրագրերի ավարտից հետո հաճախ դադարում են գործել:

ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՆԵՐ | 2021 թվականին ՔՀԿ-ների հարկային կարգավորումները թույլ են տալիս հարկ վճարողներին եկամտահարկի 1%-ը վճարել ՔՀԿ-ներին: Որպես «Լեհական գործարք» ծրագրի (Polish Deal Program) մաս՝ կառավարությունը զգալի հարկային բարեփոխումներ է իրականացրել, որոնք կարող են հանգեցնել ՔՀԿ-ներին հատկացվող

ֆինանսների կրճատմանը: Մյուս կողմից, «Լեհական գործարք» ծրագիրը նաև առաջարկում է լրացուցիչ հարկային արտոնություններ այն կազմակերպություններին, որոնք աջակցում են սպորտի, մշակույթի և կրթության ոլորտներին:

Ընկերություններն իրավունք ունեն նվազեցնել եկամտի մինչև 10%-ը չգերազանցող ՔՀԿ-ներին նվիրաբերած ընդհանուր գումարի չափով (հատուկ ուղեցույցների կիրառմամբ)⁸:

3.1.4. ԷՍՈՆԻԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | Եստոնիայում գործում է շահույթ չհետապնդող մոտ 27,000 կազմակերպություն: Երկրում ՔՀԿ-ների հիմնական մարտահրավերներ են պետական կամ դոնորական ֆինանսավորումից մեծ կախվածությունը և մասնավոր հատվածից այն ստանալը:

Որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն գրանցվելու համար յուրաքանչյուր ՔՀԿ պետք է հստակ սահմանված նպատակ ունենա և հրապարակի կազմակերպության առաքելությունը: Համաձայն Քաղաքացիական հասարակության ազգային ռազմավարության ազդեցության գնահատման, որն անցկացվում է հինգ տարին մեկ՝ 2019 թվականին ռազմավարական փաստաթուղթ մշակել է ՔՀԿ-ների ընդամենը 20%-ը:

ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ |

ԱՐՅՈՒՄԱԿ 7: ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (ԷՍՈՆԻԱ)

ԷՍՈՆԻԱ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.1	2.1	2.1	2.1	2.1	2.1

ԱՐՅՈՒՄԱԿ 8: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (2009-2021)

ԷՍՈՆԻԱ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
	2.7	2.7	2.7	2.8	2.9	2.9	2.9	2.9	3	3.1	3.1	3.3	3.3

1-3	3-5	5-7
Ընդլայնված (Enhanced)	Չարգացող (Evolving)	Սահմանափակված (Impeded)

Եստոնիայի ՔՀԿ կայունության ինդեքսը 2.1 է, հետևաբար երկիրը դասվում է «կանաչ գոտում»: Եստոնիայի ՔՀԿ կայունության ինդեքսը խոսում է քաղաքացիական հասարակության գործունեությունն ապահովող ուժեղ և կենսունակ միջավայրի առկայության մասին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԸ | Ըստ Եստոնիայի հարկային և մաքսային դեպարտամենտի տվյալների՝ ՔՀԿ-ները 2020 թվականին գրանցել են ընդհանուր առմամբ 48,7 միլիոն եվրոյի նվիրատվություն: Այս գումարը ներառում է՝ 19,7 մլն եվրո անհատական ներդրումներ (40,5%), 11,6 մլն եվրո կորպորատիվ աղբյուրներ (23,8%) և մնացած 17,4 մլն եվրո՝ անանուն նվիրատվություններ (35,7%): Վերջին տարիներին և՛ անհատական, և՛ կորպորատիվ նվիրատվությունների կայուն աճի միտում է նկատվել: Դրանում որոշիչ դեր է խաղացել NENO-ի (Եստոնական ոչ առևտրային կազմակերպությունների ցանց) և

⁸ Կորպորատիվ նվազեցումներ, PwC, 2023, [hղում](#)

Նվիրատվությունների հավաքման կազմակերպությունների ցանցի համատեղ գործունեությունը:

ՔՀԿ-ները ֆինանսավորում գտնելու համար առավել հաճախ դիմել են քրաուդֆանդինգի: Վերջին տասը տարիների ընթացքում շուրջ 165,126 անհատներ, ընդհանուր առմամբ, նվիրաբերել են մոտ 5,695,118 եվրո (Hooandja տեղական քրաուդֆանդինգի հարթակի միջոցով աջակցություն է ստացել 1,585 նախագիծ):

Համաձայն 2019 թվականի Քաղաքացիական հասարակության ազգային ռազմավարության ազդեցության գնահատման՝ ասոցիացիաների 57%-ը եկամուտ է ստեղծել ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարներ գանձելով:

Թեպետ աուդիտը պարտադիր չէ, սակայն ֆինանսավորող որոշ խոշոր կազմակերպություններ, որպես պայման, կարող են ծրագրի աուդիտորական հաշվետվություն պահանջել: Որոշ ՔՀԿ-ներ էլ, սակայն, կազմակերպության գործունեության թափանցիկությունը ներկայացնելու համար իրենք են նախընտրում կամավոր աուդիտ անցնել:

ՀԱՐԿԱՅԻՆ ԽՅՈՒՆՆԵՐ | Ներկա հարկային նվազեցման համակարգը թույլ է տալիս հարկային նվազեցումներ կատարել եկամտի 10%-ի կամ աշխատավարձի ծախսերի 3%-ի չափով: Այս շեմը շատ ընկերություններ չափազանց ցածր են համարում⁹: Այնուամենայնիվ, ներկայումս աշխատանքներ են տարվում ընկերություններին տրամադրվող արտոնությունների ընդլայնման և բարելավման ուղղությամբ, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ նման ծրագրերում նրանց ներգրավվածության և մասնակցության մակարդակի վրա:

3.2 ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՆԱԼՆԻՉՄՆԵՐ

3.2.1 ՉԱՐԳԱՑՄԱՆ (ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ | ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Այս գործիքակազմից օգտվում են պետական մարմինները, որոնք աջակցություն են փնտրում որևէ սոցիալական ոլորտի կամ նախագծի համար: Նախագծի ֆինանսավորումը ներգրավելով մասնավոր հատվածից՝ այն ձևակերպում են որպես պարտատոմս, որի վճարումները կախված են սոցիալական ծրագրի թիրախային արդյունքների ապահովումից:

Կառավարությունը, որպես կանոն, սոցիալական ծրագիրն իրականացնելու համար ներգրավում է միջնորդ կազմակերպության կամ ծրագրի հովանավորի և վճարում է նրանց՝ համաձայն ծրագրի սոցիալական ազդեցության թիրախներին հասնելու չափի:

Միջնորդ կողմը նախագծի ֆինանսավորում է ներգրավում առևտրային կամ բարեգործական ներդրողներից, այնուհետև ծրագիրն իրագործելու համար վարձում է ծառայություններ մատուցող ՔՀԿ: Եթե նախագիծը չհասնի սահմանված արդյունքներին, կառավարությունը կամ ծրագրի ադմինիստրատորը ներդրողներին չեն վճարի, և վերջիններս, կախված պայմանագրի պայմաններից, կկորցնեն իրենց ներդրումների կա՛մ մի մասը, կա՛մ ամբողջը:


⁹ Էստոնիայի եկամտահարկից նվազեցվող բիզնես ծախսեր, [hqr.md](#)

Գործիքի նպատակն է՝

- ներդրումների ազդեցությունը կապել չափելի սոցիալական արդյունքների հետ,
- ապահովել կապիտալի հասանելիությունը սոցիալական և բնապահպանական ազդեցություն ունեցող ծրագրերի համար,
- բարձրացնել պետական ծրագրերի իրականացման համար եկամուտների ստեղծման երաշխիքները,
- կիրառել արդյունավետության կառավարման խիստ մոտեցումներ,
- սերտորեն կապել վճարումները ծրագրի կատարողականի հետ՝ ապահովելով ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

Կից ներկայացվում է «ազդեցության պարտատոմսի» կիրառման սխեմայի գծապատկերը:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Այս սխեմայի մոդելներում, որոնք կարող են տարբերվել միմյանցից, կա՛մ ներգրավված են մի քանի շահագրգիռ կողմեր, կա՛մ մեկ շահագրգիռ կողմ, որը ստանձնում է բազմաթիվ գործառույթներ: Չնայած չնչին տարբերություններին՝ բոլոր մոդելներն ունեն ընդհանուր նպատակ՝ հասնել վերջնարդյունքների՝ աշխատելով նախապես տրամադրված մասնավոր ֆինանսավորմամբ:

3.2.2 ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ՔՅԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԾՐԱՎՆԱԿՆԵՐՈՒՄ

Բիզնես-ՔՅԿ հետազոտությունների և զարգացման (R&D) ոլորտում մասնավոր հատվածի և ՔՅԿ-ների համագործակցությունը եզակի և նորարարական մոտեցում է: Նման գործընկերությունը ցույց է տալիս, որ համատեղելով մասնավոր ընկերությունների ռեսուրսները, փորձը և կապերը՝ ՔՅԿ-ները կարող են սոցիալական բարոյ խնդիրների համար նոր ու տարբերվող լուծումներ գտնել: Այս երևույթը ոչ միայն նպաստում է փոխշահավետ հարաբերությունների ամրապնդմանը, այլև սոցիալական և բնապահպանական դրական ազդեցություն ունի:

ՄԱՅՔՐՈՍՈՒՑԸ ԵՎ ԾՐԱՎԱԿ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 2022 թվականի սեպտեմբերին Microsoft Corporation-ը, Planet Labs PBC-ն և The Nature Conservancy-ն ներկայացրել են համատեղ մի նախաձեռնություն, որը կոչվում է «Գլոբալ վերականգնվող էներգիայի աղբյուրների դիտարկում»՝ Global Renewables Watch (GRW):

Նորարարական այս նախագծի նպատակն է արհեստական բանականության (AI) և արբանյակային լուսանկարների օգտագործման միջոցով ստեղծել եզակի և մշտապես թարմացվող քարտեզ, որը կընդգրկի աշխարհի բոլոր այն օբյեկտները, որոնք լայն ծավալով աշխատում են արևային և քամու էներգիայով: Ծրագրի նպատակը օգտատերերին մաքուր էներգիայի կիրառման առաջընթացը չափելու և ժամանակի ընթացքում այդ ոլորտի փոփոխություններին ու զարգացմանը հետևելու հնարավորություն ընձեռնելն է:

GRW-ի նպատակը ոչ միայն յուրաքանչյուր երկրի վերականգնվող էներգիայի հնարավորությունների մասին ամբողջական պատկերացում ապահովելն է, այլ նաև ֆիքսված պատկեր ներկայացնելուն զուգահեռ նպաստել ավելի լավ հասկանալու այս ներուժը և ցույց տալու, թե ինչպես են վերականգնվող էներգիայի նախագծերը երկարաժամկետ դրական ազդեցություն ունենում շրջակա միջավայրի վրա:

Այս ռեսուրսը, հասանելի լինելով հանրությանը, հետազոտողների և քաղաքականություն մշակողների համար կծառայի որպես գործիք՝ գնահատելու առկա ներուժը, բացահայտելու բարելավման ենթակա ոլորտները և տվյալահենք որոշումներ կայացնելու վերականգնվող էներգիայի ռեսուրսների պատասխանատու և կայուն ընդլայնման վերաբերյալ:

3.2.3 ՀԱՄԱՍՏԵՂ ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾՆԵԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Համատեղ արժեք ստեղծելու գործընկերությունը կամուրջ է մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների միջև: Հիմքում հետևյալ գաղափարն է. ձեռնարկությունները կարող են ընդհանուր արժեք ստեղծել և համագործակցության այնպիսի հնարավորություններ բացահայտել, որոնք համահունչ կլինեն բիզնեսի գործունեությանը:

P&G-ի «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳ ԽՄԵԼՈՒ ԶՈՒՐ» ՈՉ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆԸ | «Մանկական անվտանգ խմելու ջուր» (CSDW) ծրագիրն ստեղծվել է 2004 թվականին՝ որպես շահույթ չհետապնդող նախաձեռնություն: Այն գործում է ավելի քան 150 գործընկերների ցանցի միջոցով: CSDW-ի հիմնական առաքելությունը մաքուր խմելու ջուր ապահովելն է՝ բաժանելով P&G Purifier of Water փաթեթները և բարձրացնելով իրազեկվածությունը ջրի համաշխարհային ճգնաժամի մասին:

P&G-ն, իրականացնելով ջրի մաքրման փաթեթների արտադրությունը, դրանք բաշխելու համար համագործակցում է ոչ առևտրային կազմակերպությունների հետ: Այս կազմակերպությունները մեծ դեր ունեն ջրի մաքրման փաթեթները գյուղական վայրեր առաքելու, ինչպես նաև բնական աղետներին և արտակարգ իրավիճակներին արձագանքելու ժամանակ:

P&G-ի նպատակն է մինչև 2025 թվականը հասանելի դարձնել 25 միլիարդ լիտր մաքուր խմելու ջուր: Այս նախաձեռնության հիմնական գործընկերներն են CARE, ChildFund, PSI, Save the Children և World Vision կազմակերպությունները:

3.2.4 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԻՄՆԱԴԴՐԱՄԵՐ

Կորպորատիվ հիմնադրամները մասնագիտացված կազմակերպություններ են, որոնք ստեղծվում և ֆինանսավորվում են մասնավոր ընկերությունների կողմից՝ հիմնականում աջակցելու ՔՀԿ-ներին և լուծելու սոցիալական տարբեր խնդիրներ: Այս հիմնադրամները գործում են մայր ընկերություններից անկախ և ապահովված են ֆինանսական միջոցներով, որոնք գոյանում են դրամաշնորհներից և նվիրատվություններից: Հիմնական առաքելությունը բարեգործությունն է և սոցիալական ազդեցություն ունեցող ներդրումները:

Cisco հիմնադրամ | Cisco հիմնադրամը ստեղծվել է 1997 թվականին՝ Cisco-ի նվիրատվությամբ: ԿՍՊ բազմաթիվ նախաձեռնություններն իրականացնելու համար Cisco-ն և Cisco հիմնադրամը համագործակցում են շահույթ չհետապնդող կազմակերպությունների, ՔՀԿ-ների և համայնքային խմբերի հետ:

Cisco հիմնադրամը համագործակցում է ոչ առևտրային և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ խնդիրներին տեխնոլոգիական լուծումներ տալու ուղղությամբ: Ծրագրերը հիմնականում թիրախավորում են ցածր եկամուտ ունեցող

համայնքները, որտեղ համացանցի և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման կարիք կա:

Հիմնադրամի գործունեությունը ներառում է.

- ռազմավարական դրամաշնորհների միջոցով աջակցության տրամադրում շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք տեղական, ազգային և միջազգային մակարդակներում երկարաժամկետ ազդեցություն ունեն,
- սոցիալական ազդեցություն ունեցող ներդրումներ,
- աշխատակիցների մասնակցության խրախուսում կամավորական և բարեգործական նախաձեռնություններում:

3.2.5 ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հմտությունների վրա հիմնված կամավորությունը նորարարական մեխանիզմ է, որը կապող օղակ է դառնում մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների միջև: Այս մեխանիզմի կիրառման ժամանակ մասնավոր ընկերությունների աշխատակիցների մասնագիտական փորձը և կարողություններն ուղղվում են համայնքային և սոցիալական խնդիրների լուծմանը: Ընկերության աշխատակիցներն իրենց արժեքավոր հմտություններով և գիտելիքներով աջակցում են ՔՀԿ-ների գործունեությանը:

IBM ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ | IBM-ի աշխատակից Դավիդի Բոյարսկին համագործակցել է իսրայելական Tech-Career ՔՀԿ-ի հետ՝ որպես IBM On Demand Community ծրագրի մի մաս՝ հիմնված կամավորության վրա: Նրանք միասին մշակել և իրականացրել են եթովպացի ուսանողների տեխնիկական հմտությունների բարելավման և կարիերայի ուղղորդման ծրագիր՝ ութ ամիս տևողությամբ, որից զատ ընկերության կամավորները տրամադրել են նաև անհատական մենթորություն: Այս նախաձեռնությունը մեկնարկն էր մի ծրագրի, որը հետագայում զգալիորեն ընդլայնվեց՝ դառնալով IBM-ի ԿՄՊ գործունեության անբաժանելի մասը:

Ծրագրի ընթացքում IBM-ի աշխատակիցների ներդրումներն են՝

- մասնագիտական հմտությունների վրա հիմնված շուրջ 20 միլիոն ժամ կամավորական աշխատանք,
- ավելի քան 470 միլիոն դոլար շուկայական արժեքով՝ հմտությունների վրա հիմնված կամավորական ներդրումներ՝ ծրագրի մեկնարկից ի վեր,
- IBM-ի ավելի քան 275,000 ակտիվ կամ թոշակի անցած աշխատակիցների ներգրավվածություն:

ԿՄՊ գործունեության շրջանակներում կազմակերպությունը տրամադրել է ազդեցության դրամաշնորհներ՝

- ավելի քան 53 մլն ԱՄՆ դոլարի 1900 դրամաշնորհ՝ ծրագրի ողջ ընթացքում,
- մոտ 6 միլիոն դոլարի նվիրաբերություն IBM-ի կողմից՝ ավելի քան 200 կազմակերպությունների՝ 2012 թվականից ի վեր:

3.2.6. «1% ԽՈՍՏՈՒՄ» ՄՈԴԵԼ

Salesforce-ի «1% կամ 1+1+1 խոստում» ծրագիրը | Salesforce ընկերությունը նախաձեռնել է «1% խոստում» կորպորատիվ բարեգործական ծրագիրը: Ծրագիրը հիմնված է այն

հայեցակարգի վրա, որ ընկերությունները կարող են դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա՝ իրենց միջոցների մի մասն ուղղելով բարեգործությանը և համայնքային ծառայությանը: «1% խոստում» նախաձեռնությունը Salesforce-ի արտադրանքի, ֆինանսական ռեսուրսների և աշխատակիցների ժամանակի (կամավորություն) 1%-ի նվիրաբերումն է ոչ առևտրային կազմակերպություններին և համայնքներին աջակցելու համար:

Salesforce-ի 1%-ի նախաձեռնությունը ԿՍՊ-ին և կայունությանն ուղղված ավելի լայն հանձնառությունների մի մասն է: Այս «1% խոստում» մոդելը դարձել է վառ օրինակ, թե ինչպես ընկերություններն իրենց հիմնական գործունեության մեջ ինտեգրեն բարեգործությունն ու սոցիալական պատասխանատվությունը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՎԱԿՅՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ | 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են շուրջ 6079 հասարակական կազմակերպություններ (ՀԿ) և 1601 հիմնադրամներ¹⁰:


Ըստ 2018 թվականի տվյալների՝ Հայաստանում ՔՀԿ-ները հիմնականում զբաղվում են իրագրության բարձրացման (88%), կարողությունների զարգացման (86%), խորհրդատվության (72%) և ծառայությունների մատուցման (63%) գործունեությամբ: Հիմնական գործունեության ոլորտներն են՝ կրթությունը (77%), համայնքային զարգացումը (68%), երեխաներն ու երիտասարդները (67%), մարդու իրավունքները (54%)¹¹:

ՔՀԿ-ներն իրավունք ունեն ֆինանսներ ներգրավել օտարերկրյա դոնորներից, ինչպես նաև դրամահավաքի միջոցառումներ կազմակերպել, ծառայություններ մատուցել, մասնակցել գնումների գործընթացներին: Նույնիսկ ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերը հնարավորություն ունեն օգտվել ֆինանսավորման որոշակի աղբյուրներից, ինչպիսիք են քրաուդֆանդինգը և տեղական բարեգործական նվիրատվությունները:

Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների գործողությունները երբեմն լիովին չեն համապատասխանում հրապարակված առաքելություններին և ռազմավարություններին: Փոխարենը նրանք հաճախ իրենց գործունեությունն են հարմարեցնում հասանելի դրամաշնորհների և ծրագրերի պահանջներին:

ՔՀԿ կայունությունը 2022 թվականին ամփոփվել է թե՛ ձեռքբերումներով, թե՛ մարտահրավերներով: Հիմնական խնդիրը ֆինանսական կայունությունն է: Դա պայմանավորված է եղել օտարերկրյա դոնորների կողմից ֆինանսավորման հասանելիության փոփոխություններով և պետական միջոցների բաշխման թափանցիկության հետ կապված շարունակական խնդիրներով:

ՔՀԿ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՆ¹²



Աղբյուր՝ 2021 Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքս, ԱՄՆ ՄՁԳ, 2023 թ.

¹⁰ 31.12.2022թ. դրությամբ գրանցված (հաշվառված) կազմակերպությունների թիվը, [հղում](#)

¹¹ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավման ԵՄ ճանապարհային քարտեզ, 2019

¹²Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքս 2022, 2023 սեպտեմբեր, [հղում](#)

1-3	3-5	5-7
Ընդլայնված (Enhanced)	Չարգացող (Evolving)	Սահմանափակված (Impeded)

ՔՀԿ կայունության ընդհանուր ինդեքսը 2022 թվականին կազմել է 3.6, որի արդյունքում երկիրը հայտնվել է «զարգացող» գոտում: Հատկանշական է, սակայն, որ ինդեքսի ֆինանսական կայունության բաղադրիչը 5.0 է, ինչը երկիրը դասում է որպես «սահմանափակված»: Արդյունքները ցույց են տալիս, որ առավել բարձր ցուցիչ ձեռք բերելու համար զգալի բարելավումների անհրաժեշտություն կա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ | Թեև ՔՀԿ-ները ֆինանսավորման միջոցներ փնտրելու, ստանալու և օգտագործելու էական խոչընդոտներ չունեն, այդուհանդերձ, դոնորների ֆինանսավորումից կախվածությունը մեծ է: Անհատական նվիրատվությունները, բիզնեսի աջակցությունը և ձեռնարկատիրական գործունեությունից կատարվող ներհոսքը կազմում են ՔՀԿ-ների եկամտի միայն փոքր մասը: Ինքնաբավությունն ապահովելու համար ՔՀԿ-ների շրջանում աճում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման կարիքը:

ԱՂՅՈՒՄԱԿ 9: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅՍՏԱՆՈՒՄ (2009-2022)

ՀԱՅՍՏԱՆ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
	5.2	5.2	5.2	5.2	5.2	5.2	5.2	5.1	5	4.9	4.9	4.9	5	5

Ֆինանսական կայունությունը, որը միշտ եղել է ՔՀԿ կայունության ամենաթույլ բաղադրիչը, 2021 թվականին վատթարացել է օտարերկրյա դոնորների անհամաչափ հասանելիության և պետական միջոցների բաշխման թափանցիկության պակասի պատճառով:

ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄ | Ֆինանսավորման հոսքերի դիվերսիֆիկացման և բիզնես հատվածի հետ համագործակցելու ընթացքում ՔՀԿ-ները հանդիպում են դժվարությունների: Բացակայում են հարկային խթանները, որոնք կխրախուսեն մասնավոր ընկերություններին նվիրատվություն անել կամ հովանավորել սոցիալական նախաձեռնությունները: Բարեգործական ծրագրերի համար հարկային արտոնություններ ստանալու գործընթացը ևս ՔՀԿ-ների համար համեմատաբար բարդ է ու ժամանակատար:

Տեղական բարեգործությունն ու Սփյուռքի նվիրատվությունները 2021 թվականին բախվել են մարտահրավերների, քանի որ կառավարությունը բավարար թափանցիկություն և հաշվետվողականություն չի ապահովել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով հավաքագրված միջոցների բաշխման հարցում: Պատերազմի ընթացքում հիմնադրամն ստացել է ավելի քան 170 միլիոն ԱՄՆ դոլար, որից 105 միլիոնը տրամադրվել է կառավարությանը: Այնուամենայնիվ, այս միջոցների օգտագործման մասին հանրությանը հասանելի տեղեկատվություն չկա:

Կորպորատիվ բարեգործությունը 2021 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է, քանի որ մասնավոր ընկերությունները նախընտրում են իրականացնել սեփական ԿՍՊ նախաձեռնությունները՝ աջակցությունը տրամադրելով ուղղակիորեն շահառուին՝ առանց ՔՀԿ-ների ներգրավման:

ՀԱՐԿԱՅԻՆ ԽՁԱՆՆԵՐ¹³ | ՔՀԿ-ներին ուղղված նվիրատվությունների խրախուսման հարկային արտոնությունները շատ սահմանափակ են: Ներկայումս գործում է ոչ առևտրային կազմակերպություններին (նաև գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին) տրամադրված ակտիվների կամ մատուցված ծառայությունների արժեքի ոչ ավելի, քան նվիրատուի համախառն եկամտի 0.25 տոկոսի չափով հարկման բազայից նվազեցման հարկային մեխանիզմը: Ըստ գոյություն ունեցող մեկ այլ մեխանիզմի՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման անհատույց կամ իրականից էականորեն ցածր արժեքով գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման առարկա է համարվում այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսը:

ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ | ՔՀԿ-ները, դիվերսիֆիկացնելով իրենց եկամտի աղբյուրները, առաջարկում են վճարովի ծառայություններ՝ ներառյալ խորհրդատվություն, հետազոտություն և տարածքի վարձակալություն: Որոշ դեպքերում ՔՀԿ-ները, առևտրային հիմունքներով, նաև հրապարակումներ, սեմինարներ կամ փորձագիտական վերլուծություններ են կատարում:

Ասոցիացիաները սովորաբար ապրանքներ և ծառայություններ առաջարկում են իրենց անդամներին, սակայն նրանց գործունեությունը երբեմն անդամակցության սահմաններից դուրս է գալիս, ինչպես օրինակ՝ Սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան, Կորպորատիվ կառավարման կենտրոնը, Փոքր և միջին ձեռնարկությունների ասոցիացիան և Առևտրաարդյունաբերական պալատը: Նրանք այնպիսի ապրանքներ կամ ծառայություններ են մշակում, որոնք լայն կիրառություն ունեն և հասանելի են բոլոր ձեռնարկություններին՝ անկախ անդամակցությունից:

Սոցիալական ձեռներեցությամբ հետաքրքրվող ՔՀԿ-ները հաճախ ուղղակիորեն չեն զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ, այլ ստեղծում են առանձին առևտրային կառույցներ կամ հանդես են գալիս որպես մասնավոր ձեռներեցներ: Այս մոտեցումը նրանց մի շարք առավելություններ է տալիս և գործունեության ընթացքում առնչվում են առավել պարզեցված վարչական գործընթացների:

Չնայած այս ջանքերին՝ ծախսածածկման և ֆինանսական կայունության հասնելու համար ոլորտը դեռ մարտահրավերների է բախվում:

¹³ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին նախագիծ, [հղում](#)

4.1. ՔՅԿ-ՆԵՐԻՆ ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԶԻՆԱՊԱՅ | ԶԻՆԱՊԱՅԸ հիմնադրվել է 2017 թվականին՝ հայրենիքի և սահմանների պաշտպանության համար ծառայության ընթացքում զոհված, անհայտ կորած կամ հաշմանդամ դարձած զինվորների բարեկեցությանը արդար և հետևողական աջակցություն ապահովելու հիմնական առաքելությամբ: Հիմնադրամի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանում և Արցախում հարկատուների կողմից կատարվող պարտադիր ամսական վճարներից (պայմանավորված նրանց եկամտի չափով), ինչպես նաև ամբողջ աշխարհում ֆիզիկական անձանցից ստացված կամավոր նվիրատվություններից:

ԶԻՆԱՊԱՅ-ի միջոցները գոյանում են՝

- Հայաստանում և Արցախում հարկ վճարողների ամսական պարտադիր վճարումներից՝ ամսական 1,500-15,000 ՀՀ դրամի չափով (կախված եկամտի չափից),
- Հայաստանից և արտերկրից ստացվող կամավոր նվիրատվություններից,
- ԶԻՆԱՊԱՅ-ի ակտիվների կառավարումից:

2017 թվականից ի վեր ԶԻՆԱՊԱՅ-ի օգտին կատարվել է 9,4 մլրդ դրամի նվիրատվություն:

«ԱՐՄԱԹ» ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ | 2011 թվականից Առաջադեմ



տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) նախաձեռնեց «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կրթական ծրագիրը: Այդ ժամանակից ի վեր ԱՏՁՄ-ն ստանձնել է տեխնոլոգիական կրթության հայկական մոդելն աշխարհով մեկ տարածելու առաքելությունը: 2023 թվականի դրությամբ

Հայաստանում, Արցախում, Վրաստանում, Քուվեյթում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Բանգլադեշում և Հնդկաստանում գործում է 641 ինժեներական լաբորատորիա: Այս լաբորատորիաներն անվճար ինժեներական կրթություն են տրամադրում մոտ 172,00 սովորողի:

Նախաձեռնությունը բազմաթիվ շահագրգիռ կողմերի համագործակցության և ֆինանսական աջակցության օրինակ է պետական, մասնավոր և հանրային դերակատարների կողմից, ինչպիսիք են ՀՀ կառավարությունը, Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը՝ ԱՏՁՄ-ն, «ՅՈՒԲՈՄԸ», Վորլդ Վիժնը Հայաստանը, «Միացյալ Հայաստան» նախաձեռնությունը (United Armenia Initiative), «Արցախբանկը», «Յունիբանկը», Վիվա-ՄՏՍ-ը, «Գաղափար Հայաստանի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամը, «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» և շատ ուրիշներ:

«ԳԻՏՈՒԺ» ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ | «Գիտուժ»-ը, նախաձեռնություն է, որն ստեղծվել է 2021



թվականին: Այս նախաձեռնության նպատակն է նպաստել Հայաստանում գիտության ոլորտի զարգացմանը և գիտության հանրայնացմանը: «Գիտուժ» նախաձեռնության ֆինանսավորման աղբյուրը նվիրատվություններն են: Համայնքը միավորում է ավելի քան 170 ձեռնարկատերերի, հիմնադիրների, բարձրաստիճան պաշտոնյաների և ավելի քան 20 հայտնի ասոցիացիաների ու հիմնադրամների:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՎԱՄ (COAF) | «Հայաստանի



մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի գործունեությունն ուղղված է Հայաստանի գյուղական շրջանների երեխաների և ընտանիքների կյանքի որակի բարելավմանը, կրթական հնարավորությունների զարգացմանը, կարևոր ենթակառուցվածքների ստեղծմանը: Կազմակերպության ֆինանսավորման աղբյուրներ են մասնավոր հատվածի դոնորները և աջակիցները, այդ թվում՝ «Ամերիբանկը», «Էվոկաբանկը», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը», «Արմենիա Մարիթը», «Գրանդ Քենդիս», «Տելեկոմ Արմենիան», Վիվա-ՄՏՍ»-ը և ուրիշներ:

«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-



ը, համագործակցելով «Հայաստանի Էներգետիկ գործակալություն» հիմնադրամի հետ, ԿՄՊ գործունեության շրջանակում մեկնարկել է «Արևային Էներգիան ի շահ մշակութային ժառանգության» ծրագիրը: Այս բազմաբնույթ նախաձեռնությունը նպատակ ունի խթանել Հայաստանի մշակութային ժառանգության կայուն զարգացումը՝ միաժամանակ արձարծելով կլիմայի փոփոխության խնդիրները: Ծրագրի հիմնական շահառուն Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանն է, որի տանիքին արևային ֆոտովոլտային էլեկտրակայան է տեղադրվել: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել թանգարանի էլեկտրաէներգիայի ծախսերը և խնայողություններն օգտագործել հիմնական այլ կարիքների համար: Ծրագրի շնորհիվ խնայված միջոցներով է թվայնացվել Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը՝ շուրջ 8000 գիրք:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ | ԿՄՊ ռազմավարության շրջանակներում «Արարատբանկը», «Իմ անտառ



Հայաստան» ՔՀԿ-ի հետ համագործակցելով, ակտիվորեն մասնակցել է անտառատնկման և անտառվերականգնման նախաձեռնություններին: Բանկն իր թիմով տնկել է 8421 ծառ: Բացի դրանից, բանկը ֆինանսավորել է «Արմաթ» տեխնոլոգիական ճամբարին աշխատակիցների երեխաների մասնակցությունը: Այս ճամբարը համախմբում է ավելի քան 200 երեխաների Հայաստանի տարբեր մարզերից, տրամադրում է արժեքավոր հարթակ նախնական ինժեներական հմտություններ ձեռք բերելու համար, բարելավում է ճարտարագիտության, ռոբոտաշինության և ծրագրավորման հմտությունները:

Վիվա-ՄՏՍ | Վիվա-ՄՏՍ-ն իրականացրել է ԿՄՊ ծրագիր, որի շրջանակներում «Իմ անտառ



Հայաստան» ՔՀԿ-ի հետ Լոռու մարզի Ջրաշեն գյուղում տնկել է 20,000 ծառ:

Բացի դրանից, Վիվա-ՄՏՍ ընկերությունը «Մենք ենք, մեր սահմանները» նախաձեռնության շրջանակում 100 մլն դրամ է հատկացրել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Աշխատակիցները նաև նվիրաբերել են հավելյալ 31 մլն դրամ՝ ընդհանուր նվիրատվությունը հասցնելով 131 մլն դրամի:

Ընդհանուր առմամբ՝ Վիվա-ՄՏՍ-ի բարեգործական ծրագրերը ներառում են շրջակա միջավայրի պահպանությունը, աջակցություն կրթությանը և մասնակցություն ազգային հրատապ նախաձեռնություններին:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ԲՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՐ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Մասնավոր ոլորտի կազմակերպությունների և ԲՅԿ-ների համագործակցության մեթոդները բազմազան են՝ ավանդականից մինչև նորարարական: Ավանդական մեթոդներն արդյունավետ են դոնորներից և պետական կառույցներից ֆինանսավորում ներգրավելու դեպքում: Մասնավոր հատվածից ֆինանսավորում ներգրավելը համագործակցության և ֆինանսավորման նորարարական մոտեցումներ է պահանջում, որոնք զարգանում են բարենպաստ միջավայրում՝ խթանելով գործող ոլորտների միջև սիներգիաները:

Մասնավոր հատվածը ԲՅԿ-ների ֆինանսավորման համար նորարարական մի շարք մեխանիզմներ է կիրառում, այդ թվում՝

- զարգացման (ազդեցության) պարտատոմսեր,
- համագործակցություն հետազոտության և զարգացման (R&D) ոլորտում,
- համատեղ արժեք ստեղծելու գործընկերություններ,
- կորպորատիվ հիմնադրամներ,
- հմտությունների վրա հիմնված կամավորություն,
- «1% խոստում» մոդել:

5.2. ԲՅԿ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

Վրաստան | Վրաստանի քաղաքացիական հասարակությունը մեծ մասամբ հիմնվում է դոնորների ֆինանսավորման վրա, ընդ որում՝ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան սահմանափակ է, և շատ ԲՅԿ-ներ կախված են մեկ դոնորից: Թեև համավարակով պայմանավորված կարճաժամկետ ֆինանսավորումը հասանելի էր, սակայն երկարաժամկետ աջակցությունը դեռևս սահմանափակ է:

Վրաստանում բարեգործության մշակույթը գտնվում է զարգացման սկզբնական փուլում, այդ պատճառով համաշխարհային վարկանիշային աղյուսակում երկիրն զբաղեցնում է վերջին հորիզոնականները: Ծառայություններ մատուցող ԲՅԿ-ները եկամուտ են ստեղծում խորհրդատվությունների, վերապատրաստումների միջոցով: Չնայած դոնորների կողմից նորաստեղծ սոցիալական ձեռնարկությունների և ձեռներեցության զարգացմանն ուղղված ուշադրությանը, Վրաստանում դեռևս քիչ են կայուն սոցիալական ձեռնարկությունները: Ընդհանուր առմամբ՝ ԲՅԿ-ները կարևորում են ֆինանսական թափանցիկությունը, այդ պատճառով մեծամասնությունն անցնում է տարեկան աուդիտ՝ հրապարակելով իր ֆինանսավորման աղբյուրները և նախագծերը:

Վրաստանում ԿՍՊ-ն զգալիորեն աճել է վերջին տասնամյակի ընթացքում: Թեև մասնավոր ընկերությունների ուշադրության կենտրոնում ավելի հաճախ բարեգործությունը և հովանավորությունն են, նրանցից շատերը փաստաթղթավորված և կառուցվածքային ռազմավարություն չունեն, որպեսզի որոշումներ կայացնեն և նախաձեռնություններ իրականացնեն:

Ուկրաինա | Ուկրաինական ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը շարունակում են մալ օտարերկրյա դոնորները: Աճում է նաև այն կազմակերպությունների թիվը, որոնք Նոյնայես, ինչպես ՔՀԿ-ները, անհատներից ֆինանսավորում ներգրավելու ուղիներ են փնտրում, օրինակ՝ խմբային նախաձեռնությունները, կենտրոնները և սոցիալական ձեռնարկությունները: Այս բազմազանությունն ընդգծում է Ուկրաինայի քաղաքացիական հասարակության գործունեության դինամիկ միջավայրը:

ՔՀԿ-ները երբեմն ֆինանսական աջակցություն են ստանում բարեգործական ծրագրերին աջակցող մասնավոր ընկերություններից: Չնայած արհմիությունները և բիզնես ասոցիացիաներն անդամավճարներ են գանձում, սակայն դրանք ֆինանսավորման փոքր և համեմատաբար աննշան աղբյուր են:

Որոշ ՔՀԿ-ներ դիվերսիֆիկացրել են իրենց եկամուտների աղբյուրները՝ առաջարկելով վճարովի ծառայություններ միջազգային կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործընկեր ՔՀԿ-ներին և բիզնեսներին: Ըստ երկրի օրենքների՝ ՔՀԿ-ները հնարավորություն ունեն եկամուտ ստեղծել նաև ձեռնարկատիրական գործունեության միջոցով:

Լեհաստան | Լեհաստանն ունի զգալի թվով ՔՀԿ-ներ. 2021 թվականի դրությամբ գրանցված է ընդհանուր առմամբ 138,000, այդ թվում՝ 107,000 ասոցիացիա և 31,000 հիմնադրամ: Սակայն գրանցված ՔՀԿ-ների միայն կեսն է ակտիվ, և նրանցից միայն կեսն է անդամավճար հավաքում, ինչը դրանց ֆինանսական կառուցվածքում չնչին մասնաբաժին ունի:

2021 թվականին կորպորատիվ բարեգործությունից ՔՀԿ-ների ստացած ֆինանսական աջակցությունը նվազել է՝ հատկապես ընկերությունների և կորպորատիվ հիմնադրամների շրջանում, մասնավորապես այն ՔՀԿ-ների, որոնք գործում են ֆինանսների ոլորտում: Տեղական մակարդակում կորպորատիվ հովանավորությունն իսպառ անհետացել է, և եթե այն առկա է, հիմնականում աջակցում է պարբերական բարեգործական միջոցառումներին: Կառավարության կողմից հավաքագրված միջոցները հիմնականում ծածկում են ՔՀԿ-ների կարճաժամկետ կարիքները և հատվածային բնույթի են:

Էստոնիա | Էստոնիայում գործում է մոտավորապես 27,000 շահույթ չհետապնդող կազմակերպություն: Այս կազմակերպություններն Էսկանորեն կախված են կառավարության կամ դոնորների ֆինանսավորումից, իսկ մասնավոր ընկերությունների կողմից երկարաժամկետ և հետևողական աջակցությունը թերի է:

Վերջին տարիներին ինչպես անհատական, այնպես էլ կորպորատիվ նվիրատվություններն աճել են. այս դրական միտումը վերագրվում է NENO-ի (Էստոնական ոչ առևտրային կազմակերպությունների ցանց) և նվիրատվությունների ցանցի համատեղ աշխատանքին:

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները հակված են աջակցելու ֆինանսական կառավարման առողջ համակարգերին: Չնայած աուդիտը պարտադիր չէ, ֆինանսավորման շահագրգիռ կողմերը, որպես պայման, կարող են ծրագրի աուդիտ պահանջել: Որոշ կազմակերպություններ իրենց հաշվետվողականությունն և թափանցիկությունը ցույց տալու համար աուդիտն իրականացնում են կամավոր:

5.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈՖԻԼ

Հայաստանում ՔՀԿ-ները հիմնականում ապավինում են դոնորների ֆինանսավորմանը և ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հարցում հանդիպում դժվարությունների: Անհատական նվիրատվությունները, կորպորատիվ աջակցությունը և ձեռնարկատիրական գործունեությունը ֆինանսական հոսքերի մեջ փոքր մաս են կազմում: Սովորաբար մասնավոր ընկերությունները նախընտրում են իրենց սեփական ԿՍՊ նախաձեռնություններն իրականացնել առանց միջնորդ ՔՀԿ-ների, որի արդյունքում նվազում է վերջիններիս միջնորդավորված ներգրավվածությունը:

ՔՀԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏԻՑ

- Երկրում անհատների և ձեռնարկությունների շրջանում բարեգործության մշակույթը, այնուամենայնիվ, զարգացման և բարելավման կարիք ունի: Կազմակերպությունները, որոնք հաջողությամբ զգալի միջոցներ են հավաքում քառուֆնդինգի գործիքների միջոցով, հաճախ գործում են արտերկրում և նվիրատվություններ հավաքելու համար թիրախավորում են Սփյուռքը:
- Ձեռնարկությունների մեծ մասը հիմնականում նվիրատվության ծրագիր կամ ռազմավարություն չունի: Միայն խոշոր ընկերություններն են սահմանել ԿՍՊ ընթացակարգերը՝ հստակեցնելով իրենց առաջնահերթ ծրագրերը և գործընկերներին: Այս ընթացակարգերը նկարագրում են ԿՍՊ գործունեության ողջ գործընթացը՝ ներառյալ ընտրության չափանիշներն ու կանոնակարգերը:
- Բիզնեսը հաճախ հակված է կարծելու, որ իր սեփական փորձը և ռեսուրսները բավարար են շահառուների հետ ուղղակիորեն աշխատելու համար, հատկապես որ համագործակցության մեխանիզմների և սխեմաների բացակայությունն ավելի է բարդացնում ՔՀԿ-ների մասնավոր ֆինանսավորումը:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Ի տարբերություն առևտրային ընկերությունների՝ հանրային գործունեություն իրականացնող կազմակերպությունները պետք է աուդիտի հաշվետվություններ կայացնեն, եթե պետական աղբյուրներից ստացվող տարեկան եկամուտը գերազանցում է 10 մլն դրամը: Սա նպաստավոր նախապայման է ՔՀԿ-ների և ֆինանսավորողների միջև հաշվետվողականության և թափանցիկության հաստատման համար: Ի տարբերություն ձեռնարկությունների՝ ավելի քիչ հավանական է, որ ՔՀԿ-ները ենթարկվեն լայնածավալ հարկային ստուգումների:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Չեկույցի այս հատվածում ներկայացված են ուսումնասիրության շրջանակներում իրականացված քանակական և որակական հետազոտությունների արդյունքները:

ԸՆՏՐԱՆՔ | Հաշվի առնելով, որ մասնավոր հատվածի խոշոր և միջին ընկերությունները նպատակային խումբ են, դրանք դիտարկվել են որպես ընտրանքային ընդլայնված շրջանակ (general population): Ներառելով միայն մասնավոր ընկերությունները որպես ընտրանքային շրջանակ՝ դիտարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 1000 խոշոր հարկատուների ցանկը՝ 2022 թ. չորրորդ եռամսյակի դրությամբ:

Կիրառվել է քվոտավորված ընտրանքի մեթոդը, և հարցում անցկացվել 151 ընկերությունների շրջանում (ցանկը՝ Հավելված 1-ում): Հետազոտությունն իրականացվել է հիբրիդային ձևաչափով՝ և՛ հեռախոսազանգի, և՛ հարցվածների կողմից հարցաթերթերի ուղղակի լրացման մեթոդով: Վերջինս իրականացվել է հետազոտական թիմի կողմից հիշեցման ակտիվ զանգերով: Ընտրված ընկերությունների հետ կապ հաստատելիս տեխնիկական խոչընդոտների դեպքում (բազմակի կոնտակտներից հետո զանգերին չպատասխանած ընկերություններ) այդ ընկերությունը շրջանցվել է և անցում կատարվել ցուցակի հաջորդ ընկերությանը կամ օգտագործվել է «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ընկերության գործընկերությունների արդյունքում ձևավորված մասնավոր ընկերությունների ցանկը:

Հարցման ենթարկվել են ընկերության անհատ աշխատակիցներ, որոնք տիրապետում են իրենց կազմակերպության հանրային կապերին և ԿՍՊ ռազմավարություններին, ֆինանսավորման որոշումների կայացման համար պատասխանատու աշխատակիցներ, գործադիր տնօրեններ կամ ղեկավար պաշտոն զբաղեցնող այլ աշխատակիցներ, հանրային կապերի և ԿՍՊ մասնագետներ:

ՀԱՐՑԱՇԱՐ | Հետազոտական գործիքները՝ հայերեն և անգլերեն հարցաթերթերը, մշակվել են խորհրդատուի կողմից և պատվիրատուի հետ քննարկման, փորձնական թեստից հետո բերվել վերջնական տեսքի: Նախքան հետազոտության լիարժեք մեկնարկը հարցաթերթերը փորձարկվել են ընտրանքային համախմբի ընկերությունների մինչև 3%-ի շրջանում, գնահատվել են հարցաշարերի ֆունկցիոնալությունն ու բարելավման ուղղությունները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՈՒՄ | Հետազոտությունն իրականացվել է փորձառու հետազոտական թիմի մասնակցությամբ, որն իրականացրել է հարցաթերթի լրացման և հետադարձ կապ հաստատելու հիշեցման զանգերը: Հարցաթերթի լրացման համար կիրառվել է Kobo Toolbox առցանց հարցման գործիքը: Հարցաթերթի լրացման միջին տևողությունը կազմել է 10-15 րոպե: Հարցման որակի վերահսկողության նպատակով հարցաթերթի բոլոր հարցերն առցանց լրացման գործիքում ներմուծվել են որպես «պարտադիր», իսկ հավելյալ հարցերի կամ պարզաբանումների համար հարցաթերթում նշված է եղել հետադարձ կապի համար հասանելի հեռախոսահամար:

6.2. ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐԻՆ ՀԱՐԳԱԶՐՈՒՅՑՆԵՐ | Քանակական հետազոտությանը զուգահեռ՝ մասնավոր ոլորտը ներկայացնող 10 շահագրգիռ կողմերի շրջանում իրականացվել են խորին հարցազրույցներ: Խորին հարցազրույցներ են անցկացվել բանկային ոլորտի, հեռահաղորդակցության, SS, արտադրական և այլ ոլորտների ներկայացուցիչների հետ:

Մշակվել է բաց հարցերից կազմված ձևայնացված ուղեցույց: Ամբողջական ուղեցույցները ներկայացված են Հավելված 2-ում: Հարցազրույցի մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ | Քանակական հետազոտության և խորքային հարցազրույցների արդյունքները համալրվել են խմբային քննարկումների արդյունքներով: Խորհրդատուն առցանց ձևաչափով իրականացրել է երեք խմբային քննարկում՝ երկուսը ՔՀԿ-ների մասնակցությամբ, մեկը՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների: Յուրաքանչյուր քննարկում իրականացվել է միջինում 4 մասնակցի հետ: Մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 4-ում:

Որակական հետազոտությունների քննարկման ուղեցույցները հասցեագրում են քանակական հետազոտություններից ստացված թեմաներն ու հիմնական դիտարկումները: Որակական տվյալները (խորին հարցազրույցներ ու խմբային քննարկումներ) վերլուծելու համար կիրառվել է մատրիցային մոտեցում:

7. ԶԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ


7.1. ՏԵՂԵԿԱՑԿԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՍԱՀՐՈՒԹՅՈՒՆ ՔՅԿ-ՆԵՐԻ ՆԿԱՏՄԱԿԸ

Ձեկույցի այս հատվածում ներկայացված են ՔՅԿ-ների նկատմամբ մասնավոր ընկերությունների վստահության աստիճանը և դրա հիմքում ընկած պատճառները:

ՔՅԿ-ների վերաբերյալ պատկերացումները շատ տարբեր են: Թեև մասնավոր ընկերությունների զգալի մասը կարծում է, որ ՔՅԿ-ները կարևոր են, դրական ազդեցություն ունեն, կարծիք կա նաև, որ որոշ դեպքերում ՔՅԿ-ները շահույթ են հետապնդում, և միշտ չէ, որ լիարժեք կատարում են իրենց առաքելությունը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1: ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՔՅԿ-ՆԵՐԻ ՆԿԱՏՄԱԿԸ ՎՍԱՀՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

N=149*




* 2 հարցվող չի պատասխանել հարցին

Ընդհանուր առմամբ՝ մասնավոր ընկերությունների վստահության աստիճանը ՔՅԿ-ների նկատմամբ բնութագրվում է չեզոքությամբ: Հարցվածների 43.0%-ը վստահության աստիճանի վերաբերյալ հստակ դիրքորոշում չունի, միայն 4.0%-ն է լիովին վստահում, իսկ ընդհանրապես չի վստահում հարցվածների 6.7%-ը: Համադրելով որակական հետազոտության արդյունքները՝ մասնավոր հատված-ՔՅԿ արդեն ձևավորված համագործակցության համար վստահության և թափանցիկության հետ կապված ինդիկատորներ չկան:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2: ԲՅԿ-ՆԵՐԻՆ ԶԿԱՍԱՅԵԼՈՒ ԴԻՄՆԱԿԱԼ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

N=100



Մասնավոր հատվածի կողմից ԲՅԿ-ներին չվստահելու հիմնական պատճառները երկուսն են՝ ոչ թափանցիկ գործունեությունը (48.0%) և շահույթ ստեղծելու առաջնահերթությունը (48.0%), ապա հաջորդում են քաղաքական օրակարգերի հետապնդումը և ֆինանսավորման խնդրահարույց աղբյուրները: Առավել հազվադեպ նշված պատճառ է ոչ պետականամետ գործունեությունը (15.0%):


Ընդհանուր առմամբ՝ մասնավոր ընկերությունները նշում են, որ ԲՅԿ-ների հետ համագործակցության արդյունավետության համար կարևոր գործոններ են թափանցիկությունն ու վստահությունը, որոնք ձևավորվում են վերջիններիս ներկայացրած ծրագրի մանրամասն ուսումնասիրման ընթացքում:

7.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՅԿ-ՆԵՐԻ ՀԵՏ

Չեկույցի այս բաժնում ներկայացված են ԲՅԿ-ների և մասնավոր հատվածի միջև համագործակցության փորձառությունն ու մոտեցումները, նախկինում մասնավոր ընկերության կողմից ԲՅԿ-ներին ֆինանսավորելու փորձառությունը, աջակցության համար ընտրված թիրախային ոլորտներն ու համագործակցության արդյունավետությունը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3: ՆԱԽԿԻՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՅԿ-ՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

N=151



Հարցված մասնավոր ընկերությունների մեծ մասը երբևէ չի աջակցել կամ չի ֆինանսավորել ԲՅԿ-ներին, միայն 34.4%-ն է երբևէ աջակցություն ցուցաբերել, որոնք

խորին հարցազրույցների շրջանակներում նշում էին, որ հիմնականում համագործակցել են հիմնադրամների հետ (COAF, «SOS մանկական գլուխներ», City of Smile, «1000+», «4090 հիմնադրամ» և այլն):

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԲՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅԱԲ

«Կազմակերպությունն ունի մասնավոր հատվածի հետ համագործակցության փորձառություն, օրինակ՝ բանկերի, հեռահաղորդակցության ոլորտի կազմակերպության, խանութների հետ, որոնք ԲԿ-ին խրախուսելու համար իրականացրել են տարբեր նախագծերի ֆինանսավորում, սակայն այս պահին առկա են խնդիրներ: Մասնավոր հատվածը փորձում է խրախուսել ԲԿ-ին և ֆինանսավորում տրամադրել, սակայն պետք է նշել, որ ԲԿ-ի տեսլականն ու սկզբունքները պետք է մասն նույնը և չփոխվեն, այնինչ ֆինանսավորող կազմակերպությունների կողմից այդ փոփոխությունները կարծես դառնում են պահանջ»:

«Ունենք մասնավորի հետ համագործակցության փորձառություն: ԲԿ-ի և մասնավոր հատվածի գործընկերները լավ ծանոթ են կազմակերպությանը, և կա վստահության բարձր աստիճան, ինչի շնորհիվ համագործակցությունն ստացվում է: Մասնավորի հետ համագործակցությունը որևէ կերպ ինստիտուցիոնալացված չէ, և բիզնեսները հիմնականում կարող են աջակցել նաև ոչ գումարային տեսքով»:

ԲԿ-ների և մասնավոր կազմակերպությունների համագործակցության համար շատ կարևոր է, որ նրանց գործունեության մեջ սկզբունքային հակասություններ չլինեն: Նման հակասության օրինակ է բնապահպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և հանքարդյունաբերական կազմակերպությունների գործունեությունը:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԲՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅԱԲ

«Նպատակադրված չենք համագործակցել մասնավոր հատվածի հետ, որովհետև երբ մասնավոր հատվածը ֆինանսավորում է ԲԿ-ին, ԲԿ-ն դառնում է գործարարի կամակատարը: Օրինակներ կան հատկապես հանքարդյունաբերության ոլորտում՝ բնապահպանական ԲԿ-ների հետ կապված աշխատանքում, որտեղ խնդիրներ են առաջանում ուղիղ համագործակցության ընթացքում: Աշխարհում բազմաթիվ օրինակներ կան, երբ պետությունը մեխանիզմներ է ստեղծում, որոնց շնորհիվ մասնավոր հատվածը ուղիղ չի ֆինանսավորում ԲԿ-ին և վերջինիս պատվիրատուն չի հանդիսանում: Հայաստանում այսպիսի պրակտիկա չկա: Աշխարհում ԲԿ-ներին, որոնք ուղիղ ձևով դառնում են բիզնեսի կամակատարը, կոչում են «BONGO»-ներ (business organized NGOs): Անկախ գործելն այսօրվա իրականության մեջ այնքան էլ հեշտ չէ, և մեր կազմակերպությունը հրաժարվում է համագործակցության առաջարկներից՝ զերծ մնալով նման խնդիրներից և պահպանելու կազմակերպության անկախությունը»:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒԹՅՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«ԲԿ-ները չպետք է հատուկ իրենց փոխեն, որպեսզի ֆինանսավորում ներգրավեն, այլ պետք է ունենան իրենց տեսլականը, նպատակներն ու առաքելությունը, և եթե այն համընկնի մասնավոր կազմակերպությունների առաքելության հետ, այդ ժամանակ ֆինանսավորման մասին քննարկումներ կընթանան»:

Համագործակցության հնարավորությունները հիմնականում ստեղծվում են հասարակական կազմակերպությունների ճանաչելիության, մասնավոր հատվածի հետ

կապերի միջոցով: Համագործակցության մեկնարկի համար ուղենիշներ են մասնավոր ընկերության առաջնահերթություններն ու հասարակական գործունեությունը իրականացնելու համար նախանշած ոլորտները: Ընդ որում՝ մասնավոր ընկերությունները հիմնականում բաց են համագործակցության համար և պատրաստ են իրենց տեսլականի հետ համապատասխանության դեպքում դիտարկել համատեղ ծրագրեր:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Կազմակերպությունն ընդունում է համագործակցային մոտեցումը, ու հիմնականում համագործակցում ենք ԶՀԿ-ների և կազմակերպությունների (հիմնադրամներ-հեղ.) հետ, որոնց արդեն ճանաչում ենք: Շեշտը դրվում է այն ԶՀԿ-ների հետ համագործակցության վրա, որոնք հստակորեն սահմանված ռազմավարական ծրագրեր ունեն և համահունչ են մեր ռազմավարական նպատակներին»:


«Ընդհանուր առմամբ բաց ենք, սակայն կարևոր է, որ ՀԿ-ի նպատակն ու առաքելությունը համընկնեն կազմակերպության (մասնավոր ընկերության-հեղ.) նպատակների հետ. այդ ժամանակ կմտածենք համագործակցելու մասին»:

«Համագործակցել ենք հիմնականում ԿՄՊ ուղղություններին համահունչ և նախանշված ծրագրերով: Եթե դիմորդ ծրագիրն ու նախագիծը համապատասխանել են, համագործակցել ենք»:

«Համագործակցության փորձառությունը հիմնականում դրական է, չենք մտածել՝ ում հետ համագործակցենք: Այն ոլորտներում, որտեղ համագործակցել ենք, այդ կազմակերպությունները եղել են հայտնին և միակը, այդ պատճառով ստացվել է համագործակցությունը»:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4: ԶՀԿ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱԼ ՈԼՈՐՏՆԵՐ, ՈՐՈՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ե ՏՐԱՄԱԴԻԿԵԼ


N=52



Այն մասնավոր կազմակերպությունները, որոնք ֆինանսական աջակցություն են տրամադրել ՔՀԿ-ներին, մեծ մասամբ (55.3%) իրենց միջոցներն ուղղել են կրթության ոլորտում գործունեություն իրականացնողներին, այնուհետև հաջորդում են՝ առողջապահության ոլորտի (38.3%), երիտասարդների կարողությունների զարգացման (34.0%), մշակույթի (29.8%), համայնքային զարգացման (27.7%) ոլորտներում գործունեություն ծավալող ՔՀԿ-ներին ուղղված ֆինանսական աջակցությունները: Առավել քիչ ֆինանսական աջակցություն են ստացել շրջակա միջավայրի պահպանության (14.9%), պաշտպանության և անվտանգության (10.6%) ոլորտներում գործող ՔՀԿ-ները: Հարցվածների 10.6%-ն աջակցություն է տրամադրել այլ ոլորտներում գործող ՔՀԿ-ների:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5: Ո՞ՒՄ ՆԱԽԱԾԵՆՈՒԹՅԱՐ Է ԵՂԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

N=52



Մասնավոր ընկերությունները հիմնականում (51.9%) իրենք են նախաձեռնել համագործակցության ձևաչափերն ու ֆինանսապես աջակցել ՔՀԿ-ներին, իսկ հարցվածների 42.3%-ը նշել է, որ նախաձեռնությունները պատկանել են ՔՀԿ-ներին, որոնց համար մասնավոր ընկերությունները աջակցության դրական որոշում են կայացրել: Միջնորդ կառույցների կամ անհատների նախաձեռնությամբ ֆինանսական աջակցության տրամադրումը հազվադեպ ձևաչափ է: Հարցվածների միայն 5.8%-ն է նշել նման նախաձեռնության մասին:

Հաջող համագործակցության ձևավորման համար կարևոր գործոններ են հասարակական կազմակերպության առաքելությունը, արդեն կատարած աշխատանքները և նախատեսվող ծրագրերի հասունությունը, համագործակցող կազմակերպությունների (մասնավոր, ՔՀԿ) տեսլականների համապատասխանությունը:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՐ

«Մեր կազմակերպությունը բավական խորությամբ ուսումնասիրում է դոնոր կազմակերպությանը, քանի որ մեզ համար շատ կարևոր է նրա հեղինակությունը և գործառույթը: Եղել են դեպքեր, որ հրաժարվել ենք առաջարկվող ֆինանսավորումից՝ հաշվի առնելով ֆինանսավորող կազմակերպության գործառույթը»:

«Կան խնդիրներ, սակայն ՀԿ-ի դիրքորոշումը, տեսլականը ու գաղափարի կիսումը պետք է ճիշտ ձևակերպվեն, և ՀԿ-ն պետք է հարմարվի բիզնեսին, այլ ոչ թե փորձի բիզնեսը ՀԿ-ին հարմարեցնել: Եթե ՀԿ-ն բիզնեսի ոլորտում առկա որոշակի խնդիրներ վերցնի և լուծում առաջարկի, բիզնեսը, իհարկե, կշրջվի դեմքով դեպի ՀԿ-ն: Իհարկե, կան օրենսդրական և հաշվետվողականության հետ կապված խնդիրներ, սակայն առաջնային խնդիրներից են ՀԿ-ի անորոշ տեսլականը և մասնավոր հատվածին ներկայացվող առաջարկները»:


«Մասնավոր հատվածին վերաբերվում ենք որպես շահառուների խմբերի, որոնց ներգրավում ենք տարբեր ծրագրերում՝ իրենց կարողությունների զարգացման, միջոլորտային համագործակցության խթանման, կարիքներին արձագանքելու նպատակով: Ունեցել ենք բիզնեսի կարողությունների զարգացման ծրագիր իրականացնելու փորձառություն, և այս դեպքում բիզնեսը դարձել է ՀՀ-ի շահառուն: Արդյունավետ համագործակցության շնորհիվ այդպիսի կազմակերպությունների հետ հետագա հարաբերությունները վերածվել են բարեկամական լավ կապերի»:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«ՀՀ-ներից ակնկալվում է ցանցային կապ (networking), բիզնեսի կրթում, բիզնեսի գործունեության դաշտում դրական փոփոխությունների իրականացում»:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6: ԹՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ


N=51



ԹՀԿ-ներին աջակցություն ցուցաբերած մասնավոր ընկերությունները, ընդհանուր առմամբ, ունեն դրական փորձառություն. հարցվածների զգալի մասը՝ 52.9%-ը, համագործակցությունը գնահատել է «լավ»: Մասնավոր ընկերությունների 27.5%-ն ունեցել է շատ դրական փորձառություն: Հարցվածների միայն 7.8%-ն է ԹՀԿ-ների հետ համագործակցության արդյունքում ունեցել բացասական փորձառություն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7: ԲՅԿ-ՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՐՁ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

N=82



Հարցվածների զգալի մասը՝ 46.3%-ը, նախընտրում է ինքնուրույն իրականացնել բարեգործական ծրագրերը՝ ուղիղ համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ: Մասնավոր հատվածի 25.6%-ը նշել է, որ ԲՅԿ-ներից համագործակցության առաջարկներ չի ստացել, իսկ 23.2%-ը նշել է, որ ԲՅԿ-ները մասնավոր ընկերություններին հետաքրքրող նախաձեռնություններ չունեն: Հարցվածների 17.1%-ը նշել է, որ չի վստահում ԲՅԿ-ներին, նույնպես մաս նշել է, որ տեղեկացված չէ ԲՅԿ-ների գործունեությունից:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Թեպետ հնարավորություն եմք ունեցել համագործակցել ֆոնդերի (հիմնադրամների-հեղ.) հետ, հիմնականում սկզբունքային եմք համարում, որ ծրագրերը մշակի և իրականացնի հենց («մեր» կամ «մասնավոր»-հեղ.) կազմակերպությունը, որպեսզի տրամադրված ֆինանսների և ծրագրերի նկատմամբ լիարժեք վերահսկողություն լինի»:

«Ինքնուրույն իրականացրած ծրագրերը չեն հաջողվել, այդ պատճառով կարևոր եմք համարում ՀԿ-ների հետ աշխատանքը: Օրինակ՝ ինքնուրույն փորձեցինք ակցիաներ իրականացնել և սևուև մատակարարել կարիքավոր ընտանիքներին, և պարզվեց, որ հասցեներն ու շահառուներն անհամապատասխան են եղել»:

ԽՄԲԱՅԻՆ ԲՆԱԴՐՎՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Ի սկզբանե, երբ նախաձեռնվել էր աջակցության ծրագիրը, կազմակերպությունը որոշում ուներ միջոցներն ինքնուրույն տեղաբաշխել: Ծրագրի շրջանակներում (համավարակի շրջանում) սահմանամերձ գյուղերի երեխաներին համակարգիչներ նվիրաբերեցինք՝ կրթությունն առցանց շարունակելու համար: Սակայն ՀԿ-ների միջոցով այս գործընթացը շատ ավելի արագ և վստահելի կազմակերպվեց, ինչից հետո կազմակերպությունն ամբողջ գործընթացը վստահեց ՀԿ-ներին»:

Հարցված մասնավոր ընկերությունների ներկայացուցիչները դրական են արձագանքել ԲՅԿ-ների և մասնավոր ընկերությունների հետ համագործակցության հնարավորություններին: Հարցվածները նշել են, որ մասնավոր ընկերությունների և ԲՅԿ-

ների համագործակցությունը խրախուսելու համար անհրաժեշտ է հեղինակություն, թափանցիկության ապահովում և կատարվող աշխատանքների վերաբերյալ իրազեկում:

Համագործակցության հաջող ձևաչափեր ստեղծելու վերաբերյալ հարցվածներն ընդգծել են հասարակական կազմակերպությունների կողմից ամբողջական առաջարկների ներկայացումն ու պրոակտիվության դրսևորումը, ինչը կխրախուսի մասնավոր ընկերությունների և ՔՀԿ-ների համագործակցությունը:


7.3. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ձեկույցի այս հատվածում ներկայացված են ՔՀԿ-ներին ֆինանսավորելու գործընթացները, որոշում կայացնելու համար կարևոր գործոններն ու ոլորտային առաջնահերթությունները:

ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև համագործակցությունն սկսվում է մասնավոր ընկերության կողմից առաջարկվող ծրագրի և ՔՀԿ-ի խորքային ու երկարաժամկետ ուսումնասիրմամբ, որը երաշխավորում է հետագա արդյունավետ համագործակցությունն ու վստահության մթնոլորտի ձևավորումը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8: ՔՀԿ-ՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԳՐԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՄ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ


N=151



Հարցվածների գերակշիռ մասը՝ 94.7%-ը, ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցություն տրամադրելու գրավոր գործընթաց կամ ուղեցույց չունի, իսկ առկայության դեպքում էլ միայն 62.5%-ն է նշել դրանց հանրային հասանելիության մասին (օրինակ՝ կայքում հրապարակված լինելը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9: ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԿԱՄ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԻ ԿԱՌՆԻ ԹՅՎ-ՆԵՐԻՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

N=151




ԽՄԲԱՅԻՆ ԲՆԱՎՐԿՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«ԿՄՊ ծրագրերն իրականացնելու համար մեր ընկերությունն ունի թիմ: Մենք նվիրատվություն անելիս հաշվի ենք առնում ՅՎ-ի համբավը, թափանցիկությունը և, իհարկե, կատարած նախորդ աշխատանքները: Մեր ընկերությունում ընդունված է «matching»-ի գաղափարը, ինչի շրջանակներում ընկերությունը իր աշխատակազմին տրամադրում է կազմակերպությունների ցուցակ, որով աշխատակիցները հետագայում իրականացնում են իրենց նվիրատվությունները, իսկ նրանց կատարած ամեն մի նվիրատվություն կրկնապատկվում է մեր ընկերության կողմից ու փոխանցվում է այդ կազմակերպությանը (ՅՎ-ին)»:

Հարցված մասնավոր ընկերությունների մեծամասնությունը կարծում է, որ ԹՅՎ-ի գործառնական և ֆինանսական թափանցիկությունը (58.9%), ԹՅՎ-ի առաքելությունը (57.6%), ԹՅՎ-ի հեղինակությունը, բարի համբավը (48.3%) կարևոր գործոններ են ԹՅՎ-ներին ֆինանսավորելու կամ աջակցելու համար: Երկրորդային առաջնահերթության գործոններ են՝ ԹՅՎ-ի կազմակերպչական կարողությունները (36.4%), ԹՅՎ-ի կողմից նորարարական և ստեղծարար մեթոդների կիրառումը (35.8%), գործունեության աշխարհագրությունը (16.6%), ֆինանսական կայունությունը (12.6%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10: ԲՅԿ-ՆԵՐԻՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՑԱՆԿԱԼԻ ՈԼՈՐՏԵՐ

N=151



Հարցված մասնավոր ընկերությունների մեծ մասը (66.4%) կրթությունը համարում է առաջնային կարևորության ոլորտ և պատրաստակամ է ապագայում ֆինանսավորելու: Կրթությանը հաջորդում են՝ երիտասարդների հմտությունների զարգացման (48.3%), համայնքների զարգացման (39.6%), առողջապահության (30.2%) ոլորտները: Առավել հազվադեպ նշված ոլորտներ են՝ մշակույթը (18.1%), կանանց հզորացումը (17.4%), մարդու իրավունքները (6.0%) և սոցիալական պաշտպանությունը (1.3%):

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԲՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԹՅԱՄ

«Պետությունը պետք է հստակեցնի և ԿՍՊ ծրագրերի համար նորմատիվներ ստեղծի (գործունեության կանոնակարգեր-հեղ.), որոնք կարող են զգալիորեն բարձրացնել բիզնեսի և ՀԿ-ի համագործակցության մակարդակը:

Մասնավոր հատվածը շատ դեպքերում աջակցում կամ ֆինանսավորում է ԲՀԿ-ին հայտնի լինելու, գովազդվելու համար կամ այլ կերպ ասած՝ բիզնեսի ինքնապաշտպանական նպատակներով, այլ ոչ պատասխանատվությամբ պայմանավորված»:

«Համագործակցությունը մասնավոր ընկերությունների հետ շատ կարճատև է լինում, և սոցիալական ոլորտում ֆինանսավորում իրականացնելու համար մասնավոր հատվածում պատասխանատվության զգացումը բացակայում է»:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Պետք է ՀԿ-ներին ֆինանսավորել, քանի որ նրանք լուրջ աշխատանք են կատարում, և դա փորձառություն է պահանջում: Բիզնեսները հիմնականում ցանկանում են ինքնուրույն իրականացնել աջակցության ծրագիրը, որովհետև շատ դեպքերում դա PR-ի համար են անում, եթե ՀԿ-ին ֆինանսավորեն, այդ մասը դուրս է մնում»:


Այսպիսով՝ մասնավոր ընկերությունները ԲՀԿ-ներին ֆինանսավորելու կամ աջակցելու ճանապարհին կարևորում են ԲՀԿ-ների գործունեության թափանցիկությունը, առաքելությունն ու իրենց ընկերության արժեքների և նպատակների հետ համապատասխանությունը:

7.4. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Չեկույցի այս հատվածում ներկայացված են մասնավոր-ԲՀԿ համագործակցության միջև առկա խոչընդոտներն ու մարտահրավերները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11: ԲՀԿ-ՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼԻՍ ԱՌԿՎ ՄԱՐՏԱԶՐԱՎԿԵՐՆԵՐՆ ՈՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

N=151



Հարցվածների 48.3%-ը որպես ԲՀԿ-ներին ֆինանսավորում տրամադրելու հիմնական խոչընդոտ նշել է այն մտահոգությունը, թե ինչպես կօգտագործվեն ֆինանսական միջոցները, և ԲՀԿ-ն որքանով հաշվետու կլինի նախատեսված արդյունքներին հասնելու համար: Մասնավոր կազմակերպությունները որպես հիմնական խոչընդոտ նշել են նաև ընկերության ֆինանսական կարողությունների սահմանափակ լինելը (45.7%): Առավել մեղմ խոչընդոտներ են համարում ԲՀԿ-ներին ֆինանսավորելու արդյունքում կազմակերպության հեղինակության վրա հնարավոր բացասական ազդեցությունը (12.6%) և ԲՀԿ-ներ գտնելու դժվարությունները (7.9%): Հարցված ընկերությունները նշել են նաև ԲՀԿ-ների առաջարկությունների սահմանափակության, դրանց ոչ նպատակային լինելու մասին:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Նվիրատվությունից հետո բացակայում է արձագանքը: ՀԿ-ի կողմից թափանցիկությունը չափազանց կարևոր է: Թեև մեր ընկերությունը շատ անգամ նկարներ է ստացել՝ որպես հետադարձ կապ, բայց կարծում եմ, որ համապարփակ հաշվետվությունը կապահովի վստահություն, որ մեր ներդրումներն ունեն զգալի ազդեցություն: Թեև ԿՍԳ-ի պաշտոնական քաղաքականություն չկա, հիմնվելով կոնկրետ խնդրանքների վրա՝ մենք ակտիվորեն մասնակցում ենք նվիրատվություններին»:

«Բոլոր ՅԿ-ների հետ համագործակցության փորձը հիմնված է եղել վստահության և միմյանց ճանաչելու վրա (ծանոթների շնորհիվ է եղել համագործակցության սկիզբը)»:

«Կազմակերպությունում առկա է համապատասխանության վարչություն (compliance department), և հենց այդ բաժինն է ուսումնասիրում դիմորդներին, ծրագրերը, ռիսկերը և այլն, ու քանի որ դա շատ խորությամբ է իրականացվում, խնդիրներ և ռիսկեր առաջ չեն եկել»:

«Չենք թիրախավորել հատուկ ՅԿ-ների հետ աշխատելը կամ չաշխատելը, ստանում ենք մեծ թվով դիմումներ ու ֆինանսավորման հայտեր և դրանցից ընտրում ենք ըստ մեր ԿՍԴ քաղաքականության չափորոշիչների, ինչպես նաև իրականացնում ենք տվյալների ստուգումներ (background checks)»:


«Բազմաթիվ ձեռնարկություններ, թափանցիկության և վստահության հետ կապված մտահոգությունների պատճառով, կարող են նախընտրել իրականացնել իրենց սեփական բարեգործական գործունեությունը, այլ ոչ թե նվիրատվություններ անել ՅԿ-ներին»:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՔՅԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Վերջին տարիներին խստացվել է հանրային միջոցներից օգտվող կազմակերպությունների հաշվետվողականության կարգը, որի համաձայն՝ հաշվետվությունները պետք է հրապարակվեն»:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12: ԻՐԱՎԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՍ ԸՆԹԱՑՎԱԲԳԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ, ՈՐՈՒՔ ԱՉԴՈՒՄ ԵՆ ՔՅԿ-ՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

N=151



Ընդհանուր առմամբ՝ հարցվածների մեծամասնությունը (53.0%) նշել է, որ իրավական, վարչական կամ ընթացակարգային խոչընդոտներ չկան: Մասնավոր ընկերությունների միայն 6.0%-ն է նշել, որ կան հարկային խոչընդոտներ, և միայն 4.7%-ն է նշել, որ կան ֆինանսական կամ ներքին կանոնադրական խոչընդոտներ:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Շատ հաճախ իրավիճակներ են լինում, երբ նվիրատվություն կատարելիս ընկերությունը լրացուցիչ ծախսեր է կատարում: Այսինքն՝ նվիրատվության ժամանակ վճարվում է լրացուցիչ հարկ, ինչը բնավ խթան չի հանդիսանում նվիրատվություն կատարողի համար: Կազմակերպությունը բախվել է նման խնդրի, երբ նվիրատվություն կատարելու ժամանակ հարկեր է վճարել և բավական մեծ թղթաբանական խնդիրների առաջ կանգնել»:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«0.25 տոկոսի շեմը քիչ է, և խոչընդոտներ կան՝ կապված ավելի շատ «հարկվելու» հետ, ինչը անարդարացի էլ ենթենտ է կազմակերպության համար»:


7.5. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չեկույցի այս հատվածում ներկայացված են՝ մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ԿՍՊ-ն և ԿՍՊ-ին հարող ծրագրերի առկայությունը, ոլորտային առաջնահերթությունները, ինչպես նաև՝ հետազայում արդյունավետ համագործակցության հիմնական գործոնները:

Շատ մասնավոր ընկերություններ ԿՍՊ-ն նույնականացնում են բացառապես բարեգործական նվիրատվությունների կամ ֆինանսական աջակցության հետ: Իսկ ՔՀԿ-ները հակված են դիմել մասնավոր ընկերություններին այն դեպքում միայն, երբ ֆինանսական աջակցություն են փնտրում: Այս թյուրըմբռնումը սահմանափակում է ԿՍՊ-ի ակնկալվող ազդեցությունը և մասնավոր-ՔՀԿ համագործակցության հնարավորությունները:

ԳԾՊԱՏԿԵՐ 13: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ


N=151



Հարցված ընկերությունների 42.4%-ը նշել է, որ ունի ԿՍՊ ծրագրեր, իսկ հարցվածների միայն 9.3%-ն է նշել, որ թեպետ ներկայում ԿՍՊ ծրագրեր չեն իրականացնում, սակայն նախատեսում են իրականացնել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14: ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ԿԱՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԿՍՊ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ


N=78



Հարցված ընկերությունների մեծամասնությունը՝ 55.1%-ը, նշել է, որ առաջնահերթ է համարում կրթության ոլորտը, 46.2%-ը՝ երիտասարդների հմտությունների զարգացումն ու զբաղվածությանը նպաստելը, 37.2%-ը՝ համայնքային զարգացումը, 30.8%-ը՝ շրջակա միջավայրի պահպանությունը: Առավել հազվադեպ նշված ոլորտներն են՝ կանանց հզորացումը՝ ներառյալ նրանց զբաղվածության խթանումը (16.7%), մշակույթը (15.4%), մարդու իրավունքները (5.1%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15: ԿՍՊ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԿԱՄ ԽՄԲԵՐԸ


N=74



ԿՍՊ ծրագրերի հիմնական թիրախային խմբերն են՝ երիտասարդները (53.2%), երեխաները (44.2%), հաշմանդամություն ունեցող անձինք (24.7%), սոցիալապես անապահով անձինք (24.7%): Հիմնական թիրախային ոլորտներից առավել հազվադեպ նշված խմբերն են՝ գործազուրկները (15.6%), տարեցները (13.0%), մշտական բնակության վայր չունեցողները (5.2%), վնասակար սովորություններից կախվածություն ունեցող անձինք (2.6%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16: ՈՐՔԱՆՈՎ Է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ ԿՍՊ ՆԱԽԱՁԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

N=60



Մասնավոր հատված-ՔՀԿ համագործակցությունը հիմնականում պարբերական բնույթ չի կրում: Հարցվածների ընդամենը 13.3%-ն է միշտ համագործակցում, իսկ 38.3%-ը չի համագործակցում:


ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՐ

«Համագործակցությունը մասնավոր ընկերությունների հետ շատ կարճատև է լինում, և սոցիալական ոլորտում ֆինանսավորում իրականացնելու համար մասնավոր հատվածում սոցիալական պատասխանատվության մակարդակը ցածր է»:

«Հայաստանում ԿՍՊ-ն զարգացած չէ, և ամեն կազմակերպություն իր ներսում պետք է ունենա, որպեսզի նման ծրագրեր իրականացնի: Իհարկե, մասնավոր ընկերությունները ևս ունեցել են իրենց օգուտը նման ծրագրերից, քանի որ օգտագործվել է իրենց անունը, լոգոն՝ այդ պրոյեկտների մեջ, բայց դա մասնավոր հատվածի համար նույնպես դոնոր հանդիսանալու խթան է»:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17: ԿՍՊ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

N=61



Մեծ մասամբ մասնավոր ընկերությունները ԿՍՊ գործունեության հաշվետվություններ չունեն, իսկ ԿՍՊ ծրագրերի արդյունքների և ազդեցության գնահատման մեխանիզմները գտնվում են սաղմնային փուլում: Ըստ խորին հարցազրույցների՝ մասնավոր ընկերություններն ունեն նախանշված գործունեության ուղղություններ, և հասարակական

կազմակերպությունների կողմից ստացված դիմումներն ուսումնասիրվում են ըստ այդ ուղղությունների, իսկ ծրագրերի գնահատման ցուցանիշները սահմանվում են՝ հաշվի առնելով ծրագրային առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ՝ համագործակցությունը մեկնարկում է ծրագրի մշակումից և քննարկումներից հետո, իսկ համագործակցության ընթացքում տարեկան որոշակի պարբերականությամբ ներկայացվում են հաշվետվություններ:

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Պատշաճ հաշվետվությունը և հաշվետվողականությունը չափազանց կարևոր են ԿՍՊ նախաձեռնություններում: Հայաստանում ներկայումս ընկերությունների կողմից ԿՍՊ գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելու պահանջ չկա: Հստակ ուղեցույցների մշակումը և թափանցիկության խրախուսումը կարող են բարելավել ԿՍՊ ազդեցությունը»:

«Ունենք հստակ ԿՍՊ ռազմավարություն, ըստ որի՝ կարևորում ենք նվիրատվություն կատարել կրթական, ռազմավարական, համայնքային և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում: Այժմ COAF-ի հետ համագործակցության շրջանակներում ունենք կրթաթոշակի ծրագիր, ըստ որի՝ ամեն տարի 3 ուսանող ներգրավվում են ծրագրում և ստանում կրթաթոշակ՝ ամբողջ ուսման վարձի չափով: Այս պահի դրությամբ ունենք նաև ծրագիր՝ արցիսահայությանը աջակցելու համար:

Կազմակերպությունը կարևորում է իր միջոցներն ուղղել այնտեղ, որտեղ զարգացման հեռանկարներ կան: Կատարում ենք նաև նվիրատվություններ «Չինվորի տանը», ինչպես նաև՝ ամեն ամսվա մարքեթինգային հասույթից 10% փոխանցում «1000+» ծրագրին:

Այս պահին ԵՄ-ի և քաղաքապետարանի հետ միասին կատարվում է նոր մեծ ծրագիր՝ կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, ըստ որի՝ կատարվելու են աղբի տեսակավորման և կրթական ծրագրեր:

ԿՍՊ ծրագրերի իրականացման ժամանակ կարևոր է կազմակերպությունների միասնական աշխատանքը, որպեսզի կրթեն հասարակությանը և օրինակ լինեն մնացած ընկերությունների համար: Իսկ հիմնադրամներ ընտրելիս կարևորում ենք համբավը, թափանցիկությունը և պահանջում ենք հաշվետվություններ»:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶԵՐՈՒՅՑ ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ


«Կազմակերպությունն ունի հստակ ռազմավարություն և ուղղություններ, որոնցով առաջնորդվում է, ինչպես նաև հաշվի է առնում սոցիալական ազդեցությունը և թե ինչ սոցիալական խնդիր է լուծվելու արդյունքում:

Ծրագրերի իրականացման արդյունքում կատարում ենք մշտադիտարկում, և կան նախանշված KPI-ներ (կատարողականի հիմնական ցուցիչներ-հեղ.): Կազմակերպությունը թեպետ գործում է շուրջ 31 տարի, սակայն միայն 2020 թվականին է սկսել սոցիալական պատասխանատվության ծրագրեր իրականացնել: Յուրաքանչյուր ծրագիր ունի իր նկարագիրը, պլանավորումը, չափորոշիչները, որոնցով անցկացվում է մշտադիտարկումը»:

«Ընդհանուր առմամբ՝ ծրագրերի չափողականությունը իրականացվում է ծրագրի բնույթից ելնելով. կան ծրագրեր, որոնք պահանջում են հստակ KPI-ներ, կան ծրագրեր, որ չեն չափվում, այլ ընդհանրական զեկույցներ են ներկայացվում»:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱԽՈՒՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՀԿ-ՆԵՐԻՑ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ


N=151



Հարցման մասնակիցների կարծիքով, որպեսզի հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի միջև ձևավորվեն համագործակցության մեխանիզմներ, ՔՀԿ-ները պետք է թափանցիկ գործունեություն ծավալեն (62.3%), հստակ ձևակերպեն իրենց առաքելությունն ու նպատակները (55.6%), ունենան ծրագրերի իրագործման հաջողված փորձառություն (51.7%), գրագետ ներկայացնեն համագործակցության առաջարկները (51.7%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 19: ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԽՐԱԽՈՒՄՈՒՄ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՊԱԳԱՅՈՒՄ ԱԶԱԿՑԵԼ ՔՀԿ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

N=151



Ըստ հարցվածների՝ ՔՀԿ-ների հետ համագործակցությունն ու դրանց ֆինանսավորումը կարող են խրախուսվել հստակ ծրագրերի ներկայացման (25.2%), ՔՀԿ-ների գործունեության թափանցիկության, վստահության ու որակի բարձրացման ապահովման (15.2%), հարկային արտոնությունների (10.6%), դրամական միջոցների առկայության (9.9%) դեպքում:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Այլ երկրներում հստակ արտոնություններ կան այն կազմակերպությունների համար, որոնք ԿՍՊ ծրագրեր ունեն. օրինակ՝ մրցույթների ժամանակ ԿՍՊ-ի առկայության դեպքում միավորների հստակ հատկացում կա, իսկ Հայաստանում պետական մրցույթներում առաջնահերթությունը տրվում է էժան գնառաջարկին»:

«Հայաստանում բիզնեսների մեծ մասը ԿՍՊ-ն նույնացնում է բացառապես բարեգործական նվիրատվությունների կամ ֆինանսական աջակցության հետ: Այս ըմբռնումը սահմանափակում է ԿՍՊ-ի հնարավոր ազդեցությունը: Իսկ ՀԿ-ները դիմում են բիզնեսներին, երբ ֆինանսական աջակցություն են փնտրում:


ՔՀԿ-ները կարող են բավարար չափով չուսումնասիրել կամ չհասկանալ բիզնեսի իրական կարիքները, ինչը խոչընդոտում է արդյունավետ համագործակցությունը: Գործարարներն ավելի հակված են աջակցելու, երբ տեսնում են, որ ՔՀԿ-ների կողմից առաջարկվող ծրագրերը համահունչ են իրենց շահերին և փորձառությանը:

Հաջող ԿՍՊ-ն ավելին է, քան ֆինանսական ներդրումները: ՔՀԿ-ները պետք է ուսումնասիրեն և բացահայտեն բովանդակալից գործընկերություններ բիզնեսների հետ, ինչպիսիք են նախագծերի կամ նախաձեռնությունների համատեղ մշակումը, որոնք ուղղակիորեն օգուտ են բերում և՛ ընկերությանը, և՛ համայնքին»:

8. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 20: ՈՐ ՄԱՐԶՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՄ ՄԱՍՆԱԿՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ


N=151



Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ մասնավոր կազմակերպությունը գործում է երևանում, այսինքն՝ ամենաբարձր ներկայացվածությունն ապահովել է Երևանը (34.1%), իսկ ամենացածրը՝ Արագածոտնի ու Վայոց ձորի մարզերը (համապատասխանաբար՝ 5.5% և 5.3%)

ԳԾԱՊԱՏԿԵՐ 21: ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ


N=151



Տվյալները ներկայացնում են հարցվածների ոլորտային բաշխվածությունը: Ամենաբարձր մասնակցությամբ ոլորտներն են՝ ՏՏ և բարձր տեխնոլոգիաները (17.2%), առևտուրը (15.2%), ֆինանսական և ապահովագրականը (8.6%), իսկ ամենացածր ներկայացվածությամբ՝ տրանսպորտի և կապի (1.3%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 22: ՀԱՐՑՎԱԾԻ ՊԱՇՏՈՆԸ


N=151



Հարցմանը մասնակցել են մասնավոր ընկերություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք կամ որոշումների կայացման մեջ դերակատարում ունեցող մասնագետներ: Հարցմանը մասնակցած ամենամեծ խումբը կազմում են տնօրենները (27.2%), ապա՝ սեփականատերերը (23.8%), այլ պաշտոններ զբաղեցնող անձինք՝ մարդկային ռեսուրսների կառավարման կամ հանրային կապերի մասնագետներ (13.2%), մենեջերներ (7.3%), ֆինանսական տնօրեններ (4.6%), փոխտնօրեններ (1.3%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 23: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՄ ԾԱՅՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱՌՈՒՅՑԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

N=151



Հարցվածների մեծամասնությունը՝ 93%-ը, ընկերությանը կից հիմնադրամ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն չունի:

9. ԵԶՐԱՅԱԿՈՒՄՆԵՐ

ՔՅԿ-ՆԵՐԻ ՆԿԱՏԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՍԱՀՈՒԹՅՈՒՆ

- Ընդհանուր առմամբ՝ մասնավոր ընկերությունները ՔՅԿ-ների նկատմամբ վստահության հարցում չեզոք են: Դա բացատրվում է ՔՅԿ-ների և մասնավոր կազմակերպությունների համագործակցության սակավությամբ, և ընդհակառակը՝ դրանք կազմակերպությունների հետ՝ համագործակցության մեծ թվով:
- ՔՅԿ-ներին չվստահելու առավել հաճախ նշված պատճառներ են՝ գործունեության թափանցիկությունը, շահույթ հետապնդելու առաջնահերթությունը, քաղաքական օրակարգերում ներգրավված լինելը: Այս պատճառների հիմքում ՔՅԿ-ների գործունեության մասին իրազեկվածության և հաղորդակցման առկա բացեր են:

ՔՅԿ-ՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Ընդհանուր առմամբ՝ մասնավոր հատվածի և ՔՅԿ-ների միջև համագործակցությունը դեռևս լայն տարածում չունի, թեև զարգացման նախադրյալներ կան: Այն մասնավոր ընկերությունները, որոնք ներգրավված են նման համագործակցության մեջ, հիմնականում ունեն դրական փորձառություն, իսկ որոնք դեռևս չունեն, բաց են համագործակցության համար:
- Համագործակցության հիմնական մարտահրավերներից է այն, որ ՔՅԿ-ները լիովին չեն ըմբռնում մասնավոր ընկերությունների կարիքներն ու ոլորտային առաջնահերթությունները, ինչը խոչընդոտում է համագործակցության արդյունավետությունը: Մասնավոր ընկերություններն առավել հակված են աջակցություն ցուցաբերելու այն ՔՅԿ-ներին, որոնց առաջարկած ծրագրերը համահունչ են իրենց հետաքրքրություններին և հիմնված են ընդունված լավագույն փորձառության վրա:
- Մասնավոր ընկերությունները, հիմնականում ստանալով մեծ թվով դիմումներ, առավել խոր ուսումնասիրում են համագործակցության եզրեր ունեցող ՔՅԿ-ները՝ ակնկալելով համագործակցել իրենց նպատակներին համապատասխանող կազմակերպությունների հետ:
- Համագործակցության արդյունավետության վրա ազդող գործոններից է այն, որ և՛ մասնավոր ընկերությունները, և՛ ՔՅԿ-ներն առաջնորդվում են սեփական օրակարգերով և միմյանց չեն ընդառաջում: Այդ է պատճառը, որ մասնավոր ընկերությունները նախընտրում են բարեգործական ծրագրերն իրականացնել ուղիղ համագործակցության միջոցով, իսկ ՔՅԿ-ները համագործակցության են ձգտում դրանք կազմակերպությունների հետ:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- Սովորաբար ՔՅԿ-ների և մասնավոր ընկերությունների համագործակցությունն սկսվում է մասնավոր ընկերության կողմից դիմորդ ՔՅԿ-ի և ծրագրի խորքային գնահատմամբ: Այս մոտեցումն ապահովում է ոչ միայն արդյունավետ համագործակցություն, այլև ժամանակի ընթացքում վստահության հիմքեր է ձևավորում:
- Մասնավոր ընկերությունների մեծամասնությունը ՔՅԿ-ներին ֆինանսավորելու կամ աջակցելու որոշում կայացնելիս կարևորում է որոշ հիմնական գործոններ՝

ՔՀԿ-ների գործառնական և ֆինանսական գործունեության թափանցիկությունը, ՔՀԿ-ի առաքելությունը, հեղինակությունը կամ համբավը և՛ հասարակության, և՛ դոնոր համայնքի շրջանում:

- ՔՀԿ-ների վստահելի լինելը, թափանցիկ գործունեություն ծավալելը, մասնավոր ընկերության արժեքներին և նպատակներին համապատասխանելը հաջող գործընկերություն ստեղծելու հիմնական որոշիչ գործոններն են:

ԽՈՉԸՆԴՈՏԵՐ

- Մասնավոր ընկերություններին գրեթե միշտ մտահոգում է, թե ինչպես կօգտագործվեն իրենց ֆինանսները, և արդյո՞ք աջակցություն ստացած ՔՀԿ-ները պատասխանատու և հետևողական կլինեն ծրագրերի իրականացման ընթացքում: Մտահոգությունները հիմնականում վերաբերում են միջոցների օգտագործման թափանցիկությանը և ՔՀԿ-ների հաշվետվողականությանը:
- Մասնավոր ընկերությունների զգալի մասը, չնայած ՔՀԿ-ներին աջակցելու պատրաստակամությանը, որպես խոչընդոտ նշել է ֆինանսական միջոցների սղությունը:
- Արդեն ձևավորված գործընկերային հարաբերություններում մասնավոր ընկերություններն ու ՔՀԿ-ները չեն հանդիպել Էական խոչընդոտների:
- Մասնավոր ընկերությունները հաճախ համագործակցում են ճանաչված հիմնադրամների հետ՝ սահմանափակելով համագործակցությունը ՔՀԿ-ների հետ:
- Բարեգործության համար սահմանված 0.25% հարկային արտոնությունը համարվում է չնչին հարկային նվազեցում, իսկ փաստաթղթային ընթացակարգերը՝ բարդ ու երկարատև, ինչից մասնավոր ընկերությունները հիմնականում խուսափում են:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅՈՒՆ

- ԿՍՊ-ն զարգացող կոնցեպտ է: Հիմնականում ԿՍՊ-ն նույնացվում է միայն բարեգործական նվիրատվությունների կամ ֆինանսական աջակցության հետ:
- ՔՀԿ-ների դիմումներում առկա են մասնավոր կազմակերպության ԿՍՊ-ի ձևակերպած ռազմավարական ուղղությունների հետ անհամապատասխանություններ, որոնք սահմանափակում են ֆինանսավորում ստանալու հնարավորությունները:
- Հարցված մասնավոր կազմակերպությունները առաջնային են համարում կրթության, զբաղվածությունը խթանող գործունեության և համայնքային զարգացման ոլորտները:
- Թիրախային ուղղություններից բացի, մասնավոր ընկերությունները իրենց ԿՍՊ ծրագրերն իրականացնելիս առանձնացնում են հիմնական շահառուների խմբերը՝ երիտասարդներ, երեխաներ և հաշմանդամություն ունեցող անձինք:
- ԿՍՊ գործունեության հաշվետվությունների և արդյունավետության գնահատման բարելավման կարիք կա: Մասնավոր ընկերությունների մեծ մասը ԿՍՊ գործունեության ամբողջական հաշվետվություններ ներկայումս չի հրապարակում: ԿՍՊ ծրագրերի արդյունքներն ու ազդեցությունը չափելու համար օգտագործվող մեխանիզմները սաղմնային փուլում են կամ ելնելով ծրագրերից՝ հատվածային բնույթ են կրում:

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեկույցի այս բաժնում ներկայացված է առաջարկությունների փաթեթ, որը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային փորձում առկա լավագույն օրինակները, համադրելով հետազոտության քանակական և որակական տվյալների արդյունքները, Հայաստանի առանձնահատկությունները: Առաջարկությունների փաթեթը նախատեսված է հիմնական շահագրգիռ կողմերի համար՝ ՔՀԿ-ներ, պետական մարմիններ, մասնավոր ընկերություններ:

10.1. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻՆ

Մասնավոր հատվածի հետ ռազմավարական նպատակների համապատասխանեցում

ՔՀԿ-ները պետք է համապարփակ ուսումնասիրություն իրականացնեն մասնավոր հատվածում գործընկերություն ձևավորելու համար: Հասկանալով ֆինանսավորող ընկերությունների կողմից նախանշված ԿՍՊ կամ ԿՍՊ առնչվող գործունեության նպատակներն ու առաջնահերթությունները ՔՀԿ-ները կարող են մշակել իրենց ծրագրերը՝ ընդգծելով, թե ինչպես համագործակցությունը կօգնի հասնել ընդհանուր նպատակներին:

Այն ՔՀԿ-ները, որոնք կարող են ցույց տալ իրենց նախաձեռնությունների համապատասխանությունը մասնավոր հատվածի նպատակներին և արժեքներին, կմեծացնեն նրանցից աջակցություն ստանալու հավանականությունը:

Կարողությունների զարգացում

Մասնավոր հատվածից ֆինանսավորում ստանալու և համատեղ ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար կարևոր դեր ունեն ՔՀԿ-ների կարողությունների զարգացումն ու փորձագիտական ներուժի բացահայտումը:

ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը պետք է իրականացնել բազմաթիվ ուղղություններով, այդ թվում՝ փորձագիտական գիտելիքների ձեռքբերում, ծրագրերի մշակում, իրականացում ու գնահատում, ֆինանսական կառավարում ու հաշվետվողականության ապահովում: Կառավարման լավ սկզբունքներ և կարողություններ ունեցող ՔՀԿ-ներն առավել գրավիչ են մասնավոր հատվածի ընկերությունների համար, քանի որ երաշխավորում են ֆինանսավորման արդյունավետ տնօրինումը և երկարաժամկետ արդյունավետ համագործակցությունը:

Թափանցիկություն և հաշվետվողականություն

ՔՀԿ գործունեության թափանցիկությունը մասնավոր ընկերությունների հետ վստահություն ձևավորելու ճանապարհին կարևոր գործոն է: ՔՀԿ-ները պետք է սահմանեն թափանցիկության բարձր նշանով՝ կանոնավոր կերպով հրապարակելով հաշվետվությունները, և թափանցիկ լինեն ֆոնդերի օգտագործման, ծրագրի արդյունքների և իրագործման ընթացքի վերաբերյալ:

Նորարարություն

ՔՀԿ-մասնավոր հատված գործընկերությունների հաջողությունը հաճախ կախված է նորարարություններ անելու՝ երկու կողմերի պատրաստակամությունից: ՔՀԿ-ների կողմից նորարարական լուծումներ առաջարկելու ուղիները կարող են ներառել՝ գործընկերության նոր ձևաչափեր, թվային տեխնոլոգիաների գործածում, կայուն տնտեսության (sustainable economy) մոտեցումներ և այլն: Մասնավոր ընկերությունները համագործակցության համար հաճախ կազմակերպություններ են փնտրում, որոնք կարող են իրենց բարդ

խնդիրներին նորարարական մոտեցումներով եզակի և արդյունավետ լուծումներ առաջարկել:

10.2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սոցիալական ծրագրերի համակարգային մոտեցում

ԿՍՊ-ն մասնավոր հատվածի համար զարգացման վաղ փուլում գտնվող ուղղություն է: Թեպետ մասնավոր ընկերություններից շատերը ձևավորված թիմեր ունեն և բազմաթիվ ծրագրեր են իրականացնում, ԿՍՊ-ն հիմնականում համակարգային բնույթ չունի և ավելի շատ ծրագրային է: Մասնավոր ընկերությունները պետք է հստակ սահմանեն ԿՍՊ նպատակներն ու առաջնահերթությունները և ապահովեն դրանց հրապարակային հասանելիությունը:

Ընդլայնված համագործակցություն

Մասնավոր ընկերությունների ԿՍՊ գործունեությունը հիմնականում ձևավորվում է հիմնադրամների հետ համագործակցության շրջանակներում, ուստի առաջարկվում է, որ ընկերություններն ակտիվորեն ուսումնասիրեն իրենց կազմակերպության տեսլականին, ԿՍՊ ռազմավարական ուղղություններին համահունչ այլ ՔՀԿ-ներ՝ նպաստելու նոր համագործակցությունների ձևավորմանը:

Երկարաժամկետ համագործակցություն

Միանգամյա նվիրատվությունների փոխարեն մասնավոր ընկերությունները պիտի ձգտեն ՔՀԿ-ների հետ երկարաժամկետ համագործակցության:

Կարողությունների վրա հիմնված կամավորություն

Միջազգային լավագույն փորձում գոյություն ունեցող ձևաչափերում մասնավոր ընկերությունները, ֆինանսական աջակցությունից զատ, աջակցում են նաև ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝ կիսվելով իրենց ընկերության աշխատակիցների մասնագիտական փորձով ու գիտելիքներով:

Մասնավոր-մասնավոր երկխոսություն

Այլ մասնավոր ընկերությունների հետ իրականացնել ԿՍՊ գիտելիքների և փորձի փոխանակման միջոցառումներ:

Ազդեցության ներդրումներ

Դիտարկել ՔՀԿ-ներում ազդեցության ներդրումներ (impact investment) կատարելը՝ թույլ տալով ընկերությանը եկամուտներ ստանալ և միաժամանակ աջակցել հասարակական մարտահրավերների հասցեագրմանը:

10.3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Մշակել պետական քաղաքականություն

Պետական քաղաքականության շրջանակներում պետք է հստակեցվի ՔՀԿ-ներին աջակցելու, մասնավոր և պետական հատվածի հետ գործընկերությունը խթանելու կառավարության հանձնառությունը: Այն պետք է սահմանի յուրաքանչյուր շահագրգիռ կողմի դերը, տրամադրի հաշվետվությունների և գործընկերության ձևաչափերի վերաբերյալ ուղեցույցներ, նախանշի ՔՀԿ-մասնավոր համագործակցության ներուժն ու զարգացման ուղղությունները, սահմանի, թե ինչպես այդ համագործակցությունը կնպաստի ազգային զարգացման նպատակներին:

Կարգավորման գործընթացների պարզեցում

ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների համագործակցության խոչընդոտները նվազեցնելու համար կարևոր պայման է բյուրոկրատական գործընթացների պարզեցումը: ԿՍՊ գործունեության համար կառավարությունը պետք է ստեղծի աջակցող և կարգավորող շրջանակներ: Դրանք կարող են ներառել խթաններ, շոշափելի հարկային արտոնություններ, պարզեցված ընթացակարգեր կամ իրավական մեխանիզմներ, որոնք խրախուսում են մասնավոր հատվածի ներգրավվածությունը սոցիալական և հասարակական նախաձեռնություններում:

Պետություն-մասնավոր-ՔՀԿ համագործակցություն

Կառավարությունը պետք է ոլորացնի պետություն-մասնավոր-ՔՀԿ համագործակցությունը՝ տրամադրելով հարթակներ և նպաստելով եռակողմ երկխոսության կայացմանը կամ հաստատմանը: Դրանք կարող են լինել քննարկումների, կոնֆերանսների, ֆորումների կամ համատեղ նախաձեռնությունների ձևաչափերով, որոնք գործընկերությանն առավել կենսունակ ծրագրեր իրականացնելու հնարավորություն կընձեռեն: Այս գործընկերությունը կարող է սիներգիա ստեղծել և արդյունավետորեն հասցեագրել տնտեսական և սոցիալական կարևորագույն մարտահրավերները:

Չարկային արտոնություններ

Մասնավոր ընկերությունները բարեգործության ներկայիս հարկային արտոնությունը (0.25%) չնչին են համարում, ուստի ժամանակատար բյուրոկրատական գործընթացներից խուսափելու համար հիմնականում հարկային նվազեցմանը չեն դիմում: Պարզեցված ընթացակարգերով հարկային արտոնությունները, ինչպիսիք են առավել շոշափելի հարկային նվազեցումները, մասնավոր հատվածի համար ՔՀԿ-ներին ֆինանսավորելու խթաններ են: Այսպիսի խթանները կարող են զգալիորեն մեծացնել սոցիալական և հասարակական նախաձեռնությունների մասնավոր ֆինանսավորումը:

Բարձրացնել ԿՍՊ-ի վերաբերյալ իրազեկվածությունը

Կրթական հաստատությունների հետ՝ քննարկելու ԿՍՊ-ի սկզբունքների վերաբերյալ կրթական և իրազեկության բարձրացմանն ուղղված ծրագրեր: Սոցիալական պատասխանատվության կրթական և իրազեկման ծրագրերը ապագա առաջնորդներին կօգնեն հասկանալու պատասխանատու կազմակերպության կարևորությունն ու հանրային օգտակարությունը:

Մշակել ԿՍՊ ազգային շրջանակ: Այս շրջանակը ԿՍՊ գործունեությամբ զբաղվող մասնավոր ընկերությունների համար պետք է ներառի ուղեցույցներ և հաշվետվության չափորոշիչներ, ինչպես նաև խրախուսի և մասնավոր ընկերությունների շրջանում բարձրացնի ԿՍՊ-ն և ԿՍՊ-ին առնչվող ծրագրերի կարևորության մասին իրազեկվածությունը:

11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

11.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1

11.1.1. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԾԱՐ

Տեղեկատվություն մասնավոր կազմակերպության մասին			
Q1	Կազմակերպության անվանումը		[.....]
Q2	Ոլորտը	1	գյուղատնտեսություն
		2	արդյունաբերություն
		3	շինարարություն
		4	առևտուր
		5	կացության և հանրային սննդի կազմակերպում
		6	տրանսպորտ և կապ
		7	SS և բարձր տեխնոլոգիաներ
		8	ֆինանսական և ապահովագրական գործունեություն
		9	անշարժ գույքի հետ կապված գործունեություն
		10	մասնագիտական և գիտական, տեխնիկական, վարչարարական և օժանդակ գործունեություն
		11	այլ
Q3	Աշխատակիցների թիվը		[.....]
Q4	Գործունեության ոլորտը (հնարավոր է մեկից ավելի պատասխան)		[.....]
Q5	Հարցվողի պաշտոնը	1	Սեփականատեր
		2	Տնօրեն
		3	Ֆինանսական տնօրեն
		4	Հանրային կապերի, մարքեթինգի, հաղորդակցության մասնագետ
		5	Այլ (նշել)
Q6	Արդյոք ունե՞ք ընկերությանը կից հիմնադրամ կամ շահույթ չհետապնդող կառույց:	1	Այո
		2	Ոչ
Տեղեկացվածությունը և վստահությունը ՔՀԿ-ների նկատմամբ			
A1	Ձեր կարծիքով, ի՞նչ դեր են կատարում ՔՀԿ-ները Հայաստանում:		[.....]
A2	1-5 բալային սանդղակով, որտեղ 1 նշանակում է «ընդհանրապես չեմ վստահում», իսկ 5-ը՝ «լիովին վստահում եմ», գնահատե՛ք Ձեր վստահությունը		[1-5]

	Հայաստանում գործող ՔՀԿ-ների նկատմամբ:		
A3	Ո՞րն է ՔՀԿ-ներին չվստահելու հիմնական պատճառը:	1	Ֆինանսավորման աղբյուրները ինդրահարույց են:
		2	Ոչ պետականամետ գործունեություն են ծավալում:
		3	Գործունեությունը թափանցիկ չէ:
		4	Առաջ են տանում քաղաքական օրակարգեր:
		5	Երբեմն վերածվում են շահույթ գներացնող կառույցի կամ ընկերության:
		6	Այլ (նշել)
Համագործակցությունը ՔՀԿ-ների հետ			
B1	Ձեր ընկերությունը նախկինում ֆինանսավորում (աջակցություն) տրամադրե՞լ է Հայաստանի ՔՀԿ-ներին:	1	Այո
		2	Ոչ
		3	Դժվարանում եմ պատասխանել
B2	Ո՞ր ոլորտում գործունեություն ծավալող ՔՀԿ-ների է տրամադրվել ֆինանսական աջակցությունը (նշել բոլոր ակտուալ տարբերակները): B1=1	1	Մարդու իրավունքներ
		2	Շրջակա միջավայրի պահպանություն, բնապահպանական ոլորտ
		3	Առողջապահություն
			Սոցիալական պաշտպանություն
		4	Կրթություն
		5	Երիտասարդների հմտությունների զարգացում, զբաղվածության նպաստում
		6	Կանանց հզորացում, այդ թվում՝ զբաղվածության նպաստում
		7	Մշակույթ
		8	Համայնքների զարգացում
9	Այլ (նշել)		
B3	Հիմնականում ո՞ւմ նախաձեռնությունն է եղել ֆինանսական աջակցության տրամադրումը (եթե համագործակցության մեկից ավելի փորձ է եղել, ապա նշել վերջին համագործակցության վերաբերյալ): B1=1	1	Մեր ընկերությունն ինքն է նախաձեռնել:
		2	ՔՀԿ-ն ինքն է աջակցություն խնդրել, և մենք աջակցելու որոշում ենք կայացրել:
		3	Աջակցությունը տրամադրվել է միջևորդ կառույցի կամ անձի նախաձեռնությամբ:
B4	Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համագործակցությունը 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «շատ վատ», 5-ը՝ «շատ լավ» (եթե համագործակցության մեկից ավելի փորձ է եղել, ապա պատասխանել վերջին համագործակցության վերաբերյալ): B1=1		[.....]
B5		1	Տեղեկացված չեմ ՔՀԿ-ներից, նրանց ծրագրերից:

	Ո՞րն է ՔՀԿ-ներին ֆինանսավորելու փորձ չունենալու պատճառը: B2=2	2	Չեմ վստահում ՔՀԿ-ներին:
		3	Մեզ հետաքրքրող ծրագրեր կամ ՔՀԿ-ներ, չկան որոնց կցանկանանք ֆինանսավորել:
		4	Նախընտրում ենք ինքնուրույն իրականացնել բարեգործական ծրագրերը:
		5	ՔՀԿ-ներից համագործակցության առաջարկներ չենք ստացել:
		6	Հստակ չէ այդ ֆինանսավորումը օգտակարությունը մեր ընկերության համար:
		7	Այլ (նշել)
Ֆինանսավորման գործընթացներ			
C1	Ձեր ընկերությունն ունի՞ ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցություն տրամադրելու պաշտոնական գրավոր գործընթաց կամ ուղեցույց:	1	Այո
		2	Ոչ
C1.1	Ի՞նչ փաստաթղթում է այն ամրագրված: (C1=1)		[.....]
C1.2	Հասանելի՞ է արդյոք գրավոր գործընթացը կամ ուղեցույցը կայքում կամ որևէ այլ տեղ:	1	Այո
		2	Ոչ
C2	Որո՞նք են այն հիմնական չափանիշները կամ գործոնները, որոնք Ձեր ընկերությունը հաշվի է առնում կամ հաշվի կառնի ապագայում ֆինանսավորման համար ՔՀԿ-ներ ընտրելիս (ընտրել 3 կարևոր պայման):	1	ՔՀԿ-ի առաքելությունը
		2	ՔՀԿ-ի հեղինակությունը, բարի համբավը
		3	ՔՀԿ-ի կողմից նորարարական և ստեղծագործ մեթոդների օգտագործումը խնդիրներ լուծելիս
		4	ՔՀԿ-ի երկարաժամկետ ազդեցության և ռեսուրսների կառավարման կայուն ծրագիրը
		5	ՔՀԿ-ի թափանցիկությունն իր ֆինանսական և գործառնական պրակտիկայում
		6	ՔՀԿ-ի կազմակերպչական կարողությունները և հմտությունները՝ առաջարկվող նախաձեռնություններն արդյունավետ իրականացնելու համար
		7	ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը
		8	Գործունեության աշխարհագրությունը
		9	Այլ (նշել)
C3	Ո՞ր ոլորտի ՔՀԿ-ներին եք հակված կամ ապագայում հակված կլինեք ֆինանսավորելու:	1	Մարդու իրավունքներ
		2	Շրջակա միջավայրի պահպանություն, բնապահպանական ոլորտ
		3	Առողջապահություն
			Սոցիալական պաշտպանություն
		4	Կրթություն
5	Երիտասարդների հմտությունների զարգացում, զբաղվածության նպաստում		

		6	Կանանց հզորացում, այդ թվում՝ զբաղվածության նպաստում
		7	Մշակույթ
		8	Համայնքների զարգացում
		9	Այլ (նշել)
խոչընդոտներ			
D1	Ի՞նչ մարտահրավերների ու խոչընդոտների է հանդիպում կամ կարող է հանդիպել Ձեր ընկերությունը ԶՀԿ-ներին ֆինանսավորում տրամադրելիս:	1	ԶՀԿ-ների և մեր ընկերության նպատակները սոցիալական ազդեցության ոլորտում չեն համընկնում:
		2	Մեր ընկերության ֆինանսական կարողությունների սահմանափակությունը:
		3	Մտահոգությունը, թե ինչպես կօգտագործվեն միջոցները, և արդյոք ԶՀԿ-ն հաշվետու կլինի նախատեսված արդյունքներին հասնելու համար:
		4	ԶՀԿ-ներ գտնելու դժվարությունները, որոնք գործում են կոնկրետ տարածաշրջաններում, համայնքներում:
		5	ԶՀԿ-ներին ֆինանսավորելու հետևանքով կազմակերպության հեղինակության վրա հնարավոր բացասական ազդեցությունը:
		6	Այլ (նշել)
D2	Որո՞նք են այն իրավական, վարչական կամ ընթացակարգային խոչընդոտները, որոնք ազդում են ձեր ընկերության՝ ԶՀԿ-ներին ֆինանսավորելու կարողության վրա, եթե այդպիսիք կան:		[.....]
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն			
E1	Ձեր ընկերությունն իրականացնո՞ւմ է ԿՍԴ ծրագրեր կամ նախաձեռնություններ:	1	Այո
		2	Ոչ
		3	Չենք իրականացնում, բայց մտադիր ենք:
E1.2	Ո՞ր ոլորտներն է թիրախավորում կամ մտադիր է թիրախավորել Ձեր ԿՍԴ ծրագիրը (հնարավոր է մեկից ավելի պատասխան):	1	Մարդու իրավունքներ
		2	Շրջակա միջավայրի պահպանություն, բնապահպանական ոլորտ
		3	Առողջապահություն
		4	Սոցիալական պաշտպանություն
		5	Կրթություն
		6	Երիտասարդների հմտությունների զարգացում, զբաղվածության նպաստում
		7	Կանանց հզորացում, այդ թվում՝ զբաղվածության նպաստում
		8	Մշակույթ
		9	Համայնքների զարգացում

		10	Այլ (նշել)
E1.3	Ովքե՞ր են ԿՍՊ ծրագրի թիրախային խումբը կամ խմբերը:	1	Երեխաները
		2	Տարեցները (65 տարին լրացած անձինք)
		3	Հաշմանդամություն ունեցող անձինք
		4	Կանայք
		5	Երիտասարդները
		6	Գործազուրկները
		7	Սոցիալապես անապահով կամ աղքատ ընտանիքները
		8	Մշտական բնակության վայր չունեցող կամ ժամանակավոր բնակության վայրում ապրող ընտանիքները
		9	Վնասակար սովորություններից կախվածություն ունեցող անձինք
		10	Սեզոնային միգրանտները և նրանց ընտանիքները
E3	Որքանո՞վ է ձեր ընկերությունը համագործակցում ՔՀԿ-ների հետ՝ իր ԿՍՊ նախաձեռնությունների շրջանակներում:		Միշտ համագործակցում ենք:
			Երբեմն համագործակցում ենք:
			Չենք համագործակցում:
E4	Ձեր ընկերությունն ունի՞ հաշվետվությունների մեխանիզմ՝ իր ԿՍՊ գործունեության արդյունքները և ազդեցությունը ՔՀԿ-ների և հանրության հետ կիսելու համար:	1	Այո
		2	Ոչ
E7	Ձեր կարծիքով, ի՞նչ միտումներ կամ հնարավորություններ կան մասնավոր ընկերությունների համար՝ ՔՀԿ-ների հետ համագործակցելու:		[.....]
E8	Ի՞նչը կարող է խրախուսել ձեր ընկերությանը՝ ապագայում աջակցելու ՔՀԿ-ների գործունեությանը:	1	[.....]
E9	Ի՞նչ կարող են անել ՔՀԿ-ները համագործակցությունը խրախուսելու համար (հնարավոր է մեկից ավելի պատասխան):		Հստակ ձևակերպեն իրենց առաքելությունը, նպատակները:
			Ներկայացնեն անցյալում իրագործած հաջողակ ծրագրերը:
			Թափանցիկ գործունեություն ծավալեն:
			Ներկայացնեն գրագետ համագործակցության առաջարկ:
			Ֆինանսավորման մոդելների ընտրության հարցում լինեն ճկուն և բաց՝ ընդունելու ընկերության առաջարկները:
			Հստակեցնեն, թե՞ ինչպես կարող է համագործակցությունը երկուստեք օգտակար լինել և՛ ՔՀԿ-ին, և՛ ընկերությանը:

		Նախաձեռնեն հանդիպումներ:
		Այլ (նշել)

11.1.2. ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
1	Orders.co
2	«Քրոսսնեթ» ՍՊԸ
3	«Տուշպա» գինիներ
4	«ՏունՏունիկ» մանկապարտեզ
5	«Տոնուս» սպորտ ակումբ
6	«Տոն Վիզաժ ստուդիո»
7	«Վուդ Սթիլ» ՍՊԸ
8	«Վիվա-ՄՏՍ»
9	«Վիլյա Ռեսթ Յաուզ»
10	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
11	«ՍՊ2»
12	«Սիվիտտա ԷյԷմ» ՓԲԸ
13	«Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմ»
14	«Սի Էֆ Թի» ՍՊԸ
15	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
16	«Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթթլեր» ՍՊԸ
17	«Ջեյ Սի Էյ» Հայաստանի ոսկերչական ընկերություն
18	«ՊՐՈՖԱԼ» ՍՊԸ
19	«Շինցեմենտ» ՍՊԸ
20	«ՇԵՆԳԱՎԻԹ» բժշկական կենտրոն
21	«ՄՖ» ՍՊԸ
22	«Մուսալեռ Տպագրատուն» ՍՊԸ
23	«Միլթո» ՓԲԸ
24	«Մերիդիան Թրեյլ»
25	«Մանուկյան Թիմ»
26	«Հորթել Ալվա» ՍՊԸ
27	«Հեթիաթում» ինսամբի և զարգացման կենտրոն
28	«Հասիս»
29	«Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ» (ՖԱՍԹ)
30	«Հաթերթ Ֆուդ» ՍՊԸ
31	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
32	«Կոմայուտեր Սերվիս» ՍՊԸ
33	«Կոկա-Կոլա»
34	«Կարեն Ռաֆայելյան» ԱԶ
35	«ԿԱՌՄԻԼԱՆ» ՍՊԸ
36	«Կանաչ թագուհի» (Անահիտ Սարգսյան ԱԶ)
37	«Կալիբրի Գրուպ» ՍՊԸ
38	«Լիմֆ»

39	«Ինստիտուտ Սոբայլ» ՓԲԸ
40	«ԻԿԿԱ»
41	«Թեք սերվիս»ՍՊԸ, staff.am
42	«ԹԱԶԹՈՒՆ» ՍՊԸ
43	«ԹԱԴ-Մ» ՍՊԸ
44	«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ
45	«Էմ. Յու. Բեյ. Զոմֆիլոթերս» ՍՊԸ
46	«Էմ ԿԱ Էմ Travel
47	«Էլբոր դիսթրիբյուշն» ՍՊԸ
48	«Էլ բոնասայթ»
49	«Չանգեզուրի պրինձամոլիբդենային կոմբինատ (ՉՊՄԿ) ՓԲԸ
50	«Երևանի շոկոլադի գործարան» ՓԲԸ
51	«Երասխի գինու գործարան» ՍՊԸ
52	«Դոկտոր բեսթ» ՍՊԸ
53	«Գրանատուս Վենչուրս» ՓԲԸ
54	«Գինեգործարան
55	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
56	գաղտնի է
57	«Գալիք» ՍՊԸ
58	«Գալաքսի» ընկերությունների խումբ
59	«Արկոլադ» ՓԲԸ
60	«Բերքառատ Հայաստան»
61	«Արփի» չոեր
62	«Արմենիան Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ» ՓԲԸ
63	«Արմբրոք» ՓԲԸ
64	«Արմբերրի» ՓԲԸ
65	«Արկոլադ» ՓԲԸ
66	«Արեգի» ՍՊԸ
67	«ԱՐԳՈ» ՍՊԸ
68	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
69	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ
70	«Աննա Միրզոյան» ԱԶ
71	«ԱՄ Փարթնըրզ Զոնասայթինգ Քամփնի» ՍՊԸ
72	«Ակվա-Լեն Շին»
73	«Ակոտեկ LLC»
74	«Ակբա բանկ» ԲԲԸ
75	«Ալֆա Ֆարմ»
76	«Ագրոբարիք»
77	Yerevan-Audit Consult CJSC
78	Yerevan home care
79	Yandex (in Armenia)
80	X-Art LLC
81	Vecto Digital
82	UNICOMP

83	Telcell CJSC
84	Teambyconsulting
85	Team Telecom Armenia
86	Synopsys Armenia
87	SVLAND
88	RED Invest Group
89	QuestLine Academy
90	Primesoft
91	Premier Foods LLC
92	PMI Science
93	PMA
94	Picsart
95	ORG service
96	Office class ՍՊԸ
97	NOR projects
98	New Green Way
99	Narekavanq tour
100	MOSH STUDIO
101	Markt guru
102	London Medical
103	Lidia décor
104	Level Print
105	JTI Armenia CSJC
106	JATO LLC
107	It Training Center
108	Internet projects
109	IMR
110	Import Solutions LLC
111	Hsbc bank
112	Holiday Inn Express Yerevan
113	Hexact
114	Griphon PR company
115	Gradus Solutions
116	FSP Advice LLC
117	Fotomaster LLC
118	Fortuna LLC
119	flash spy
120	FeedConstruct
121	Engineerinc.io
122	Disqo Armenia
123	Decora Group LLC
124	DDC
125	Cypress
126	Creative Web

127	Color boom
128	City spa
129	City central llc - Ramada hotel
130	C square
131	BeBeeWAY
132	BANA Angels, The Factory
133	Bagine Fashion House
134	Babyland
135	Aygi Products
136	AS Concern
137	Artuyt
138	AMP ՍՊԸ
139	AMC ՓԲԸ
140	Alpha food Service
141	AGG group ՍՊԸ
142	AGG
143	ACRA CREDIT REPORTING CJSC
144	10Web
145	«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ
146	«Յուբոմ» ՓԲԸ
147	«Էյ-Էն Առևտրո» ՓԲԸ
148	«Արփիսուլար» ՍՊԸ
149	«Արաքս թռչնաֆաբրիկա» ՓԲԸ
150	«Էվրի Դեյ» ՓԲԸ
151	«Անի Պլազա Զորթել» ՓԲԸ

11.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

11.2.1. ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայիս պատկերացումները ՔՀԿ-ների վերաբերյալ

1. Որքանով եք ծանոթ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) գործունեությանը: Նախկինում ունեցե՞լ եք համագործակցության փորձ ՔՀԿ-ների հետ կամ բարեգործական նախաձեռնություններ՝ առանց ՔՀԿ-ի մասնակցության:
2. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր վստահությունը Հայաստանում գործող ՔՀԿ-ների նկատմամբ: Խնդրում ենք նշել Ձեզ վստահություն ներշնչող գործոնները: Որո՞նք են Ձեր կարծիքի ձևավորման պատճառները:
3. Ի՞նչ եք կարծում, մասնավոր կազմակերպությունները պե՞տք է համագործակցեն, աջակցեն ԿՍՊ-ներին:

Համագործակցություն ՔՀԿ-ների հետ

4. Ձեր կազմակերպությունը նախկինում համագործակցել կամ ֆինանսավորե՞լ է ՔՀԿ-ներին: Եթե այո՝ խնդրում ենք կիսվել ՔՀԿ-ների հետ համագործակցելու Ձեր փորձով: Եթե ոչ՝ խնդրում ենք պատճառաբանել Ձեր որոշումները:
5. Ո՞ր ոլորտներում է Ձեր կազմակերպությունը նախկինում ֆինանսական աջակցություն ցուցաբերել: Կարո՞ղ եք օրինակներ բերել ֆինանսավորված նախաձեռնություններից կամ նախագծերից:
6. Երբևէ իրականացրե՞լ եք բարեգործական նախաձեռնություններ՝ առանց ՔՀԿ մասնակցության: Եթե այո՝ ապա խնդրում ենք մանրամասնել պատճառները:

Ֆինանսավորման ակնկալիքներն ու չափանիշները

7. Ի՞նչ չափանիշներ կամ գործոններ է հաշվի առնում Ձեր կազմակերպությունը ֆինանսավորման համար ՔՀԿ-ներ ընտրելիս: Ի՞նչ գործոններ են ազդում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին նվիրատվություններ անելու Ձեր որոշման վրա:
8. Ունե՞ք ԿՍՊ ռազմավարություն, պատասխանատու թիմ կամ աշխատակից նման համագործակցության համար: Եթե այո՝ խնդրում ենք տրամադրել մանրամասներ (հասանելի՞ են արդյոք ԿՍՊ ռազմավարությունը և ընթացակարգերը ՔՀԿ-ների

համար և այլն), իսկ եթե ոչ՝ պատճառները: Խնդրում ենք կիսվել ՔՀԿ-ների հետ ԿՍՊ նախաձեռնությունների միջոցով համագործակցության Ձեր փորձով:

9. Ինչպե՞ս եք չափում ֆինանսավորվող ծրագրերի ազդեցությունը կամ Ձեր կազմակերպության ԿՍՊ նախաձեռնությունների ազդեցությունը:
10. Որքանո՞վ է Ձեր կազմակերպությունը բաց ՔՀԿ-ների հետ համագործակցության համար՝ որպես իրենց ԿՍՊ նախաձեռնությունների մաս: Կա՞ն մարտահրավերներ կամ խոչընդոտներ, որոնց հանդիպել եք նման գործընկերություններ ստեղծելիս:
11. Ձեր կազմակերպությունը ո՞ր ոլորտներում կամ ծրագրերում կարող է ֆինանսական աջակցություն տրամադրել: Կա՞ն կոնկրետ թեմաներ կամ խնդիրներ, որոնք առաջնահերթություն են Ձեր կազմակերպության համար:

Մարտահրավերներ և խոչընդոտներ

12. Սեփական փորձից ելնելով՝ որո՞նք են լուրջ մարտահրավերները Ձեր կազմակերպության համար՝ Հայաստանում ՔՀԿ-ների ֆինանսավորման և նրանց հետ համագործակցության ընթացքում:
13. ՔՀԿ-ների հետ առնչվելիս թափանցիկության կամ հաշվետվողականության հետ կապված մարտահրավերների հանդիպե՞լ եք: Ինչպե՞ս կարելի է հաղթահարել առկա խոչընդոտները՝ ավելի վստահելի հարաբերություններ ստեղծելու համար:

Համագործակցության հնարավոր եղանակներ

14. Գիտե՞ք հաջողված դեպքեր (օրինակներ) և համագործակցության մոդելներ (մասնավոր հատված-ՔՀԿ), խնդրում ենք կիսվել մեզ հետ:
15. Ի՞նչ խթաններ են անհրաժեշտ մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների համագործակցությունը հնարավոր դարձնելու համար:

Այլ հնարավորություններ

16. Բացի ֆինանսական աջակցությունից, այլ հնարավորություններ տեսնո՞ւմ եք՝ նպաստելու ՔՀԿ-ների կարողությունների և կազմակերպչական զարգացմանը: Եթե այո՝ ապա ի՞նչ ձևաչափերով:
17. Ի՞նչ ակնկալիքներ ունեք մասնավոր հատվածի ընկերությունների և ՔՀԿ-ների հետագա համագործակցություններից: Որո՞նք կլինեն նման գործընկերությունների իդեալական արդյունքները:
18. Ի՞նչ կցանկանայիք ավելացնել կամ առաջարկել:

11.2.2. ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՔՅԿ

Սկզբնական հարցեր

1. Խնդրում ենք համառոտ ներկայացնել Ձեզ, Ձեր պաշտոնը կազմակերպությունում և Ձեր կազմակերպության գործունեության բնույթը:
2. Ձեր կազմակերպության ֆինանսավորման ռազմավարության մեջ օգտագործո՞ւմ եք կամ ունե՞ք ֆինանսավորում մասնավոր ընկերություններից:
3. Ծանո՞թ եք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՅԿ)՝ մասնավոր հատվածից ֆինանսավորման առկա հնարավորություններին:

Ընկալումներ և վստահություն մասնավոր հատվածի ընկերությունների հանդեպ

4. Որքանո՞վ է կարևոր մասնավոր հատվածի ֆինանսավորումը Ձեզ համար: Որքանո՞վ եք վստահ այդ աջակցության շարունակականության մեջ: Խնդրում ենք նշել պատճառները:
5. Ի՞նչ կարծիք ունեք Հայաստանում ՔՅԿ-ներին ֆինանսավորող մասնավոր ընկերությունների մասին:

Համագործակցություն մասնավոր հատվածի ընկերությունների հետ

6. Ձեր ՔՅԿ-ն նախկինում ֆինանսավորվե՞լ է մասնավոր հատվածի որևէ ընկերությունից: Եթե այո՝ ինչո՞ւմ ենք կիսվել Ձեր փորձով: Եթե ոչ՝ ինչո՞ւմ ենք մանրամասնել հնարավոր պատճառները, որոնք, Ձեր կարծիքով, կարող էին խանգարել մասնավոր հատվածի ընկերություններին ֆինանսավորում տրամադրելու Ձեր ՔՅԿ-ին:
7. Ո՞ր ոլորտներում է Ձեր ՔՅԿ-ն ֆինանսավորվել մասնավոր հատվածի կողմից: Կարո՞ղ եք կիսվել որևէ կոնկրետ նախաձեռնությամբ կամ ծրագրով, երբ աջակցություն եք ստացել:

Ֆինանսավորման գործընթացներ

8. Խնդրում ենք նկարագրել մասնավոր հատվածի ընկերություններին ֆինանսավորման համար դիմելու Ձեր մոտեցումը:
9. Ֆինանսավորման համար մասնավոր հատվածին դիմելու տեսանկյունից ինչո՞վ է Ձեր կազմակերպությունը տարբերվում այլ ՔՅԿ-ներից:

10. Ինչպե՞ս եք ուսումնասիրում մասնավոր ընկերության ֆինանսավորման քաղաքականությունը նախքան դիմելը: Ի՞նչ փոփոխություններ եք կատարում Ձեր դիմումներում դրա հիման վրա:
11. Եթե այո՝ խնդրում ենք մանրամասնել այն հիմնական չափանիշները կամ գործոնները, որոնց հիման վրա, կարծում եք, որ Ձեր ԲՀԿ-ն պետք է ֆինանսավորում ստանա:
12. Տրամադրո՞ւմ եք, արդյոք, կանոնավոր հաշվետվություն, տարեկան հաշվետվություն, թե՛ այլ ձևաչափով է ընթանում հաշվետվողականությունը. խնդրում ենք մանրամասնել:

Խոչընդոտներ և մարտահրավերներ

13. Ի՞նչ մարտահրավերների կամ խոչընդոտների է հանդիպում Ձեր ԲՀԿ-ն մասնավոր հատվածից ֆինանսավորում փնտրելիս: Կա՞ որևէ կոնկրետ խոչընդոտ, որը խանգարում է Ձեզ՝ ձեռք բերելու անհրաժեշտ ֆինանսավորումը:

Գործընկերություններ և հնարավորություններ

14. Ձեր ԲՀԿ-ն ակտիվորեն փնտրո՞ւմ է գործընկերություն կամ համագործակցություն մասնավոր հատվածի հետ: Եթե այո՝ խնդրում ենք նկարագրել այս գործընկերությունների բնույթը և հիմնական նպատակները:
15. Ի՞նչ հնարավորություններ եք տեսնում մասնավոր ընկերությունների համար՝ շարունակելու ԲՀԿ-ների հետ հետագա համագործակցությունը: Ինչպե՞ս կարող է այս համագործակցությունն օգուտ բերել երկու կողմերին:

ԲՀԿ-ների դերը համագործակցության խրախուսման գործում

16. Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարող են անել ԲՀԿ-ները՝ շահագրգռելու մասնավոր ընկերություններին, որ ավելի ընդլայնեն աջակցության շրջանակը և համագործակցությունն իրենց հետ:
17. Ունե՞ք որևէ առաջարկ կամ մեկնաբանություն:

Փակում

Շնորհակալություն բոլոր մասնակիցներին՝ քննարկման և արժեքավոր կարծիքների համար:

11.2.3. ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | ՄԱՍՆԱԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սկզբնական հարցեր

1. Խնդրում ենք համառոտ ներկայացնել Ձեզ, Ձեր դերը կազմակերպությունում և Ձեր կազմակերպության բիզնես գործունեության բնույթը Հայաստանում:

Ընկալումը և վստահությունը ՔՀԿ-ների հանդեպ

2. Խնդրում ենք կիսվել Հայաստանում ՔՀԿ-ների (ՀԿ-ների) գործունեության և դերի վերաբերյալ Ձեր պատկերացումներով:
3. Ինչպիսի՞ վերաբերմունք ունեք Հայաստանում գործող ՔՀԿ-ների (ՀԿ-ների) նկատմամբ: Որո՞նք են Ձեր կարծիքի ձևավորման պատճառները:

Համագործակցություն ՔՀԿ-ների հետ

4. Ձեր ընկերությունը նախկինում ֆինանսավորվել է ՔՀԿ-ների: Եթե այո՝ խնդրում ենք կիսվել Ձեր փորձով: Եթե ոչ՝ խնդրում ենք մանրամասնել հնարավոր այն պատճառները, որոնք կարող էին խանգարել Ձեր ընկերությանը՝ ֆինանսավորելու ՔՀԿ-ներին:
5. Ո՞ր ոլորտներում է Ձեր ընկերությունը ֆինանսավորել ՔՀԿ-ներին: Կարո՞ղ եք կիսվել որևէ կոնկրետ նախաձեռնությամբ կամ ծրագրով, որին աջակցություն են տրամադրել:

Ֆինանսավորման ակնկալիքներն ու չափանիշները

6. Ունե՞ք արդյոք ԿՍՊ ռազմավարություն և թիմ, որը պատասխանատու է նման համագործակցության համար: Եթե այո՝ խնդրում ենք տրամադրել մանրամասներ, իսկ եթե ոչ՝ խնդրում ենք նշել պատճառները: Խնդրում ենք կիսվել ԿՍՊ նախաձեռնությունների միջոցով ՔՀԿ-ներ ներգրավվելու Ձեր փորձով:
7. Ի՞նչ չափանիշներ կամ գործոններ է Ձեր կազմակերպությունը հաշվի առնում ՔՀԿ-ներ ընտրելիս: Ի՞նչ գործոններ են ազդում ՔՀԿ-ներին նվիրատվություններ անելու ձեր որոշման վրա:
8. Ձեր կազմակերպությունը ո՞ր ոլորտներում կամ ծրագրերում կարող է ֆինանսական աջակցություն տրամադրել ՔՀԿ-ներին: Կա՞ն կոնկրետ թեմաներ կամ խնդիրներ, որոնք Ձեր կազմակերպության համար առաջնային են:

Մարտահրավերներ և խոչընդոտներ

9. Ձեր փորձից ելնելով, որո՞նք են այն մարտահրավերները, որոնց բախվում է Ձեր կազմակերպությունը Հայաստանում ՔՀԿ-ների հետ համագործակցության կամ նրանց ֆինանսավորման ժամանակ:
10. ՔՀԿ-ների հետ առնչվելիս թափանցիկության կամ հաշվետվողականության հետ կապված որևէ մարտահրավերի հանդիպե՞լ եք: Ինչպե՞ս կարելի է լուծել այս մտահոգությունները՝ ավելի վստահելի հարաբերություններ ստեղծելու համար:

Օրենսդրական միջավայր

1. Ինչպե՞ս եք գնահատում մասնավոր հատվածի կողմից ՔՀԿ-ներին աջակցություն տրամադրելու ներկա օրենսդրական միջավայրը. նպաստավո՞ր է այն, թե՞ սահմանափակող:
2. Կա՞ն օրենսդրական կամ այլ խոչընդոտներ, որոնց Ձեր ընկերությունը հանդիպել է ՔՀԿ-ների հետ համագործակցելիս, որո՞նք են ֆինանսավորման կամ համագործակցության սահմանափակումները:
3. Ունե՞ք օրենսդրական միջավայրը բարելավելու առաջարկություններ քաղաքականություն մշակողներին՝ խրախուսելու մասնավոր հատվածին համագործակցել ՔՀԿ-ների հետ:
4. Ձեր ընկերությունն ինչպե՞ս է չափում ՔՀԿ-ների հետ իր համագործակցության ազդեցությունը, և ո՞ր չափանիշներն ու ցուցանիշներն եք առավել կարևոր համարում:

Համագործակցության հնարավոր եղանակներ

11. Ի՞նչ խթաններ են անհրաժեշտ մասնավոր հատվածի և ՔՀԿ-ների համագործակցությունը հնարավոր դարձնելու համար: Ինչպե՞ս եք պատկերացնում ՔՀԿ-ների և մասնավոր հատվածի «իդեալական» համագործակցության մեխանիզմները:
12. Ունե՞ք որևէ առաջարկ կամ մեկնաբանություն:

Փակում

Շնորհակալություն բոլոր մասնակիցներին՝ իրենց արժեքավոր կարծիքի և քննարկմանը մասնակցելու համար:

11.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
1.	«Ամերիաբանկ»	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բաժնի ավագ մասնագետ	Շուշան Իսոյան
2.	«Արարատբանկ»	Հասարակայնության հետ կապերի գծով գործադիր տնօրենի խորհրդական	Աննա Ալլահվերդյան
3.	«Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա»	Կորպորատիվ հարցերի և կայունության տնօրեն	Էլինա Մարգարյան
4.	Picsart	Հաղորդակցման և կորպորատիվ հարցերի մասնագետ	Լաուրա Հովակիմյան
5.	Team Telecom Armenia	Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար	Գրիգորի Յուրին
6.	ArtLunch	Հիմնադիր տնօրեն	Բակուր Մելքոնյան
7.	Hard Rock սրճարան (Food Republic)	Մարքեթինգի տնօրեն	Էլինա Սահակյան
8.	Hellotex	Տնօրեն	Անդրանիկ Հարությունյան
9.	«ԱՆԻՖ»	ESG և հաղորդակցման խորհրդական	Աննա Սաղբայան
10.	«Դեպո Ծրագիր» («Եվրասիա» համագործակցություն հիմնադրամ) ՀԿ	Ծրագրի պատասխանատու	Գայանե Մկրտչյան
11.	Մասնավոր ոլորտում ԿՍՊ փորձագետ		Նազարեթ Սեֆերյան



CIVITTA Estonia
info.ee@civitta.com
+372 646 448 8
www.civitta.ee

CIVITTA Latvia
info.lv@civitta.com
+371 277 055 85
www.civitta.lv

CIVITTA Lithuania
info.lt@civitta.com
+370 685 266 80
www.civitta.lt

CIVITTA Finland
info.fi@civitta.com
+358 505 261 694
www.civitta.fi

CIVITTA Denmark
info.dk@civitta.com
+452 762 80 83
www.civitta.com

CIVITTA Poland
info.pl@civitta.com
+48 690 001 286
www.civitta.pl

CIVITTA Slovakia
info.sk@civitta.com
+421 901 700 574
www.civitta.sk

CIVITTA Ukraine
info.ua@civitta.com
+380 442 270 140
www.civitta.com.ua

CIVITTA Belarus
info.by@civitta.com
+375 296 018 517
www.civitta.by

CIVITTA Romania
info.ro@civitta.com
+403 180 535 88
www.civitta.ro

CIVITTA Moldova
info.md@civitta.com
+373 797 550 99
www.civitta.md

CIVITTA Armenia
info.am@civitta.com
+374 10 546 434
www.civitta.am

CIVITTA Serbia
info.rs@civitta.com
+381 11 2435 489
www.civitta.rs

CIVITTA Bulgaria
info.bg@civitta.com
+359 884 076 576
www.civitta.bg

**CIVITTA North
Macedonia**
info.mk@civitta.com
+389 71 391 957

CIVITTA Kosovo
info.ks@civitta.com
+383 493 380 55
www.civitta.com

CIVITTA Sweden
info.se@civitta.com
www.civitta.com

CIVITTA Georgia
info.ge@civitta.com
www.civitta.com

WE LOOK FORWARD TO WORKING WITH YOU